


219

# ԾՐԱԳՐԵՐ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ

## III ՊՐԵԿ

1. ԿԵՆԴՐԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
2. ԲՈՒԽԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
3. ԵՎՈԼՈՒՑԻՈՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ
4. ՄԱՐԴՈՒ ԱՆԱՏՈՄԻԱ. ՅԵՎ. ՖԻԶԻՈԼՈԳԻԱ.
5. ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵթոդիկԱ.







ՀԽՍՀ Լուսավորության Փողովրդական Կոմիտարիան  
տարական գպրցների վարչություն

57(071.2)

# ԾՐԱԳՐԵՐ

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ

### III ՊՐԵԿ

- A 23093
- ԿԵՆԴՐԱԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
  - ԲՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
  - ԵԳՈԼՈՒՑԻՈՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ
  - ՄԱՐԴՈՒ ԱՆԱՏՈՄԻԱ ՑԵՎ ՖԻԶԻՈԼՈԳԻԱ
  - ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿԱՆ ԹԵՍԱԿԱՆ  
ՅԵՐԵՎԱՆ — 1987



## ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ\*)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ . ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԴԱ-  
ՍԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ (1 Ժամ)

Կենդանաբանությունը դիտությունն և կենդանիների կյանքի  
և կազմության մասին :

Տեսական կենդանաբանության խնդիրները ԽՍՀՄ-ում : Կեն-  
դանիների արգյունաբերական և գյուղատնտեսական ուսումնա-  
սիրությունը : Կենդանաբանության կիրառման նշանակությունը :

Հասկացողությունն կենդանիների բնական դասակարգու-  
թյան՝ նրանց խմբերի բաժանելու մասին, ազգակցության ու  
ծագման միասնության տեսակետից :

Կրոնական-դոգմատիկական պատկերացումը կենդանաբանու-  
թյան անփոփոխ լիության մասին և դրա դասակարգային ելու-  
թյունը :

I. ՆԱԽԱԿԵՆԴԱՆԻՆԵՐ ԿԱՄ ՄԻԱԲԶԻՋ ՈՐԳԱՆԻՉՄԱՆԵՐ (3 Ժամ)

Ամյուրան և հողարավիիկը վորպես ժամանակակից միաբջիջ  
կենդանիների ներկայացուցիչներ : Սրանց կազմությունն ու կեն-  
դական զործունեյությունը : Տնակավոր արմատոտանիներ և  
որանց դերը լեռնային ապարների առաջացման զործում : Նախա-  
կենդանիների ազգեցությունը ջրամբարների վրա : Հիվանդաբեր  
ամյուրանները և պայքարի միջոցները որանց դեմ :

Կանաչ եվզենան վորպես որինակ կենդանական և բուսական

\* ) Տրագիկը ուսուերենից թարգմանել և Աղ. Վարդապետյանը  
հայերեն թարգմանությունը խմբագրել պբսֆ. Աղ. Տեր-Պողոսյանը:

Հաստկանիչների համատեղման մի որդանիզմի մեջ։ Ստորակարգ  
կենդանիների և բույսերի մոտիկությունը, վորպես ազացուցց  
նրանց ընդհանուր ծաղման։

Ժամանակակից նախակենդանիները վորպես արդյունք զար-  
դացման յէրկարամեկ պրոցեսի։

Նախակենդանիների տիպի բնութագիրը։

Գործնական պարապմունք։ Նախակենդանիների դիտումը  
մանրադիտակի տակ։

## II. ԱՆԵԽՈՐՃԱՎԱՐՄՆԵՐ ՅԵՎ. ՍՊՈՒՆԳՆԵՐ (2 ժամ)

### Ա. Աղեխորշավորներ

Անուշահամ ջրերի հիդրան վորպես որինակ աղեխորշավոր-  
ների։ Նրա մարմնի կազմության, սնման ու բազմացման առանձ-  
նահատկությունները։ Հիդրայի պաշտպանողական հարմարանք-  
ները և նրա սեղեներացիոն ընդունակությունը։ Աղեխորշավոր-  
ներին պատկանող զաղութ կազմող ծավային կենդանիներ։ Բրա-  
ծո կորալները հողի հնագույն շերտերում։ Աղեխորշավորների ծա-  
զումը և նրանց վորակական տարրերությունը միարջիշ գաղու-  
թային ձեւերից։ Հասկացողություն աղեխորշավորների տիպի  
մասին։

Գործնական պարապմունքներ։ Հիդրայի դիտումը լուպայի և  
մանրադիտակի տակ։

### Բ. Սպունգներ

Լեռապունզը կամ գիտասպունզը վորպես սպունգների տիպի  
ներկայացուցիչներ։ Սպունզի մարմնի և կմախքի կազմությունը,  
նրա սնումն ու բազմացումը։ Ծովային սպունգներ, նրանց տըն-  
տեսական ու բնական նշանակությունը։ Սպունգների տարրերու-  
թյունը աղեխորշավորներից։

Ա. Տափակ վորդեր

Կաքնային պլանարիան վորպես անուշահամ ջրերի տափակ թարթչավոր վորդերի ներկայացուցիչ։ Պլանարիայի կազմության և բազմացման առանձնահատկությունները։ Պլանարիան վորպես ուղենիրացիայի յերեվույթի ուսումնասիրության կլասիկ որյակա։ Լարդի ծծող և յերիզորդ։ Տափակ պարագիտ վորդերի կյանքի զարգացման ցիկլը, վարակման ճանապարհներն ու պայքարի միջոցները։ Պարագիտիզմի աղղեցությունը նրանց կառուցվածքի պարզեցման վրա։

Բ. Կլոր վորդեր

Ասկարիսը վորպես կլոր վորդերի ներկայացուցիչ։ Ասկարիսի մարմնի արտաքին ու ներքին կազմությունը և նրա բաղմացումը։

Տրիխինան և պայքարի միջոցները նրա դեմ։  
Գործնական աշխատանիք։ Ասկարիսի ձվերի ցուցադրումը մանրագիտակի տակ։

Գ. Ռդակավոր վորդեր

Անձրեավորդը վորպես որինակ ողակավոր վորդերի։ Անձրեվավորդի մարմնի ներքին և արտաքին կազմությունը։ Անձրեվավորդերի սննդառությունը և նրանց նշանակությունը Հողառողջացման պրոցեսում։ Անձրեավորդի բազմացման առանձնահատկությունները։ Հատվածավորության (մետամերիայի) և ուղենիրացիայի յերեվույթներն անձրեավորդերի մոտ։ Թարթչավոր աղատ աղրող տափակ վորդերի ծավումը աղեխորչավորներից։

Գործնական պարապմունիք։ Անձրեավորդի հերձումը։

Ա. Փափկամորքներ

Անատամը վորպես որինակ թերթախոմիկ փափկամորթի : Անատամի կաղմությունը, կենսաբանությունը և բաղմացումը : Ուսելի փափկամորթներ : Վորոշ փափկամորթների տեխնիկական ովասագործումը : Գյուղատնտեսության վնասատուները (փորոտանի փափկամորթներ, լորտնուկներ) և պայքարի միջոցները նրանց դեմ :

Բրածո գլխոսանի փափկամորթներ : Փափկամորթների տիպի ընդհանուր բնութագիրը և նրանց վորդերի հետ ունեցած եղուոցիոն կապի նշանները :

«Ծովի հատակը» կինոնկարի ցուցադրում :

Բ. Փշամորքներ

Ծովասալը վորպես փշամորթների տիպի ներկայացուցիչ : Ծովաստղի կաղմության առանձնահատկությունները՝ կապված նրա ծովի հատակում ունեցած կյանքի հետ : Նրա բաղմացումը : Փշամորթների տարածվածությունը հողի հադարյան շերտերում : Փշամորթների տիպի ընդհանուր բնութագիրը :

V. ՀՈԴՎԱԾՈՑԱՆԻՆԵՐ (8 Ժամ)

Հողվածոտանիների տիպի առանձին դասերի ուրվագիծը :

Գետի խեցգետինը վորպես որինակ հողվածոտանիների տիպի և խեցգետակերպերի դասի : Նրա արտաքին ու ներքին կաղմությունը և կենսաբանությունը : Ծովային բարձրակարգ խեցգետիններ և նրանց արհեստագործական ու տնտեսական նշանակությունը : Ստորակարգ խեցեմորթների կենսաբանական նշանակությունը : Հնագույն բրածո խեցեմորթները :

Սարդակերպներ, Խաչսարդ և այլն թունագոր սարդակերպներ (կարակուրտ, մորմ, կարիճ) : Նրանց համառոտ կենսաբանությունը :

Բազմուտանիմեր . Հազարվուտնուէլը և ուրիշները : Հնագույն  
բազմուտանիների կապը մի կողմից բարձրակարդ վորդերի և  
մյուս կողմից միջատների հետ :

Միջատները վորպես հոդվածուանիների բարձրագույն դա-  
սը : Միջատների ձևերի բազմազանությունը և սրա նշանակու-  
թյունը բնության լնդհանության և մարդկային  
ոլրակտիկայի մեջ :

Աև խափարասերի, վորպես միջատների ներկայացուցչի,  
մարմնի արտաքին ու ներքին կաղմությունը : Աև խավարասերի  
և մյուս միջատների բազմացումն ու զարդացումը : Ուղղաթեղ  
վնասատուներ (մորեիս, ծղրիս) :

Մայիսյան բզեզը և նրա կենսաբանությունը : Մայիսյան  
բզեզի և նրա թրթուրի պատճառած վնասները և պայքարի մի-  
ջոցները նրա դեմ : Բզեզների կարդի վնասակար ու ովտակար  
միջատները (գնայուն բզեզներ, ջրասեր բզեզներ, աղբարզեզ-  
ներ, զատիկ, յերկարակնձիթ բզեզներ, զերեզմանափոք բզեզ-  
ներ, տերեւակեր բզեզներ, լողացող բզեզներ և այլն) : Սեռային  
դիմորֆիզմ :

Թեփաթեկեր, նրանց համառուտ բնութաղիրը և կենսաբա-  
նությունը : Անտառի, գաշտի բանջարանցի թեփաթեկ վնասա-  
տուները և պայքարի միջոցները նրանց դեմ :

Շերամը վորպես որինակ արհեստագործական ովտակար  
միջատի : Սեղոնային դիմորֆիզմ, պաշտպանողական գունավո-  
րում և միմիկրիս :

Մեղու . նրա կաղմության առանձնահատկությունները : Մե-  
ղուների բուծումը, վորպես արհեստագործական միջատների :  
Միջատների և այլ թաղանթաթենների (մրջյուններ, կրետներ,  
բռուեր) բազմածեռությունը (պոլիմորֆիզմը) : Հասկացողություն  
միջատների բնազդի մասին :

Սենյակի ճանճ, նրա կաղմությունն ու կենսաբանությունը :  
Ճանճների պատճառած վնասները և պայքարի միջոցները նրանց  
դեմ : Յերկթեանիների այլ ներկայացուցիչները, վորպես հի-  
վանդություններ տարածողներ (սիրիբախտ, մալարխա, լուծ,  
դիզինտերիտ, քնահիվանդություն և այլն) : Հոդվածակնձիթ  
ճպուռներ, միորյակներ, լվեր և սրանց կենսաբանությունը :

Հոգվածոտանիների տիպի ընդհանուր բնութագիրը : Առանձին զասերի ծաղումը և նրանց փոխագալքը կապը :

Գործնական պարապմունքներ՝ Մայիսյան բղեղի անդամակառումը և արևելյան խաղարասերի (տարականի) կամ գետի խեցքետնի հերձումը :

### VI. ԼՍՐԱՎԱՐԻ ԿԵՆԴԱՆԵՆԵՐ— ԶԿՆԵՐ (5 ժամ)

Հասկացողություն լարավոր կենդանիների տիպի մասին և նրա բաժանումը յենթատիպերի : Նշանարիկը վորպես անդանդ-ների յենթատիպի ներկայացուցիչ : Նշանարիկը մարմնի կալ-մության առանձնահատկությունները և նրա բազմացումը : Նըշ-տարիկը վորպես միջակա ձև :

Զկները վորպես վողնաշարավորների յենթատիպ : Գետի պեղու-կեսը վորպես ձկների զասի ներկայացուցիչ : Նրա մարմնի ա-ռանձնահատկություններ՝ կապված ջրային կենցաղի հետ : Շնաձկների և թառափների կազմության պարզ գծերը վորպես նրանց ծաղման հեռլեթյան առացույց :

Կրկնաշունչ ձկները և նրանց մոտիկությունը յերկկենցաղնե-րին : Վոսկրոտ ձկների ամենաարժեքավոր տեսակները և նրանց բաշխումը (փրփրուկ (տրեսկա), տառեխներ, սալմոններ և ու-րիշները) : Զկնորսական ուղիները և նրանց կապը ձկան կյան-քում զոյություն ունեցող սեղոնային յերեվույթների հետ : Զըկ-ների արհեստական սերմնավորումը և լճային տնտեսություն : Բրածո ձկները : Զկների դասի ընդհանուր բնութագիրը :

Գործնական պարապմունքներ . Պերկեսի հերձումը : Կինո-ֆիլմ «Զկնորսարաններ» (ձկնային պրոմիսլաներ) :

### VII. ՅԵՐԿԿԵՆՑԱՂՆԵՐ ՅԵՎ ՍՈՂԱԽՆՆԵՐ (6 ժամ)

#### Ա. ՅԵՐԿԿԵՆցաղներ (ամֆիբիներ)

Գորտը վորպես որինակ յերկկենցաղների դասի : Գորտը մարմնի ներքին և արտաքին կազմությունը կապված նրա կեն-

ցաղի հետ : Զկան հետ համեմատած՝ դորտի մարմնի կազմության բարդացումը կապված նրա ցամաքային կյանքին անցնելու յերեսութիւնի հետ : Անուշահամ ջրամբարների առկայությունը, վորպես գորտերի դոյության անհրաժեշտ պայման : Գորտի բազմացումն ու զարդացումը : Յերկկենցաղների կերպարանափոխությունը . չերեքուկի անցումն կրկնաշունչ կենդանիների աստիճանով : Անպոչների կարգի այլ ներկայացուցիչները, նրանց կենսաբանական առանձնահատկությունները և տված ողուտը վնասաբեր միջատների ու կակլամորթների վոչչացման գործում :

Պոչավոր յերկկենցաղները և նրանց կենսաբանական առանձնահատկությունները (սալամանդրաներ, պրոտեռուս, արիտոն, ամբլիստոմա) : Բրածո յերկկենցաղներ :

Յերկկենցաղների դասի ընդհանուր բնութագիրը :  
Գործնական պարապմունք . գորտի հերձումը :

### Բ. Սողութներ (ռեպտիլներ)

Սողունների դասի գլխավոր կարգերը : Մողեսը վորպես սողունների դասի ներկայացուցիչ : Մողեսի անատոմիական-Փիգիուղիական տարրերությունները յերկկենցաղներից և նրա առավել բարձր զարգացման գծերը : Մողեսի կենսաբանությունը : Ոձերի, կրիաների և կոկորդիլոսների կենսաբանական առանձնահատկությունները : Սողունների տեղը ժամանակակից կենդանական աշխարհում և նրանց ծաղկման նախկին շրջանը յերկը կյանքի միջին դարաշրջանում : Մեռած մողեսների ազդակցական կապը յերկկենցաղների և ժամանակակից սողունների հետ :

Այս դասի ընդհանուր բնութագիրը :

### VIII. ԹՐՉՈՒԽՆԵՐ (6 Ժամ)

Աղավնին վորպես թոչունների դասի որինակ : Աղավնումարմնի արտաքին ու ներքին կազմության առանձնահատկությունները, կապված նրա թոշելու հարմարանքների հետ : Թրոչունների ձվի կազմությունը և սաղմի դարգացումը : Բնակալ և բնախոս թոչունների տարրերությունները : Թոչունների կենսա-

բանությունը (սեռային և սեղոնային դիմորֆիզմ, կանչելը, բան դնելը, չինելը և սրանց պատմական պատճառները) :

Տափակակուրծք քոչուններ. Աֆրիկական ջայլամ, սրա կազմության, բուն դնելու և գերաբավորման առանձնահատկությունները: Այլ վաղող տափակակուրծք թուչուններ (կիվի, կասուար, եմու) :

Ակնարկ վաղնուցակուրծք քոչունների զլօսավոր կարգելի վրա

Սագագիններ. Վայրի բաղը վորպես սաղազինների որինակ: Բաղի կազմվածքի առանձնահատկությունները, կապված նրա ջրային կենցաղի հետ: Երնդի հողատարությունը և բաղի կենարանական այլ առանձնահատկությունները: Սագազինների այլ ներկայացուցիչներ՝ սաղեր, կարապներ:

Հալազգիններ. Ծնոտանի հավը վորպես զետնաբնակ թուչունների ներկայացուցիչ: Նրա կառուցվածքի առանձնահատկությունները, կապված նրա զետնի վրա ազրելու կենսաձեի հետ: Ծնոտանի հավերի վայրի ազգակիցները՝ բանկիվյան (հնդկական) տքաղաղը, Փաղանը, անտառահավը, աքարը, կաքավը, փասիանը: Նրանց կյանքի ընդհանուր նկարագրությունը և տաքրերվող նշանները:

Ցերեկային գիշատիչներ. Գիշատիչ կենդանիների ընդհանուր բնութագիրը (կտուցը, մաղիները, թեկը, տեսողությունը և այլն) և նրանց կենսաբանական առանձնահատկությունները: Գիշատիչների մեծ մասի տված ոգութները (ուրուրներ, արծիվներ, անդղներ, բաղեներ և այլն):

Բուեր. Բու և բվիճ: Բուերի կառուցվածքի առանձնահատկությունները կապված նրանց կենցաղի հետ: Բուերի տված ողութները վնասակար կրծողների վոչնչացման գործում:

Փայտփորներ. Մեծ խայտարգետ փայտփորը վորպես որինակ մաղլցող ծառաբնակ թուչունների: Փայտփորիկի կառուցվածքի առանձնահատկությունները կապված նրա սննդի տեսակի հետ:

Ճննդուկներ. Այս կարգի ընդհանուր բնութագիրը: Այս կարգի մի քանի ներկայացուցիչները (ծիծեռնակը, աղուալը; սար-

յակը, քնարահավերը, արքայիկները, դրախտապանները և այլն): Ընտանի ծննդուկը, նրա կառուցվածքի և կենսաբանության առանձնահատկությունները:

Դյուզատնտեսության համար ողտակար թուչուններին հրապուրելն ու պահպանելը և պայքար վնասատունների դեմ: Արհեստագործական թուչունների տնտեսական նշանակությունը և նրանցից ստացվող արդյունքները: Արհեստագործական թուչուններին դիշատիչ վոչնչացումներից պահպանելու միջոցառումները:

Թուչունների ծագումն ու աստիճանական զարգացումը (նախաթուչուն (արխեոպատերիքու) և այլ բրածո թուչուններ):

Թուչունների դասի բնութագիրը:  
Գործնական պարապմունքներ. աղավնու ցուցադրական հեռացումը:

## IX. ԿԱԹՆԱՍՈՒԽՆԵՐ (12 ժամ)

Ճագարը վորպես որինակ կաթնասունների: Կաթնասունների արտաքին կառուցվածքի և ներքին որգանների տարրերի: առանձնահատկությունները՝ մյուս զաներին պատկանող կենդանիների համեմատությունը:

Կաթնասունների ձեւերի բազմապիսությունն ու մասնագիտացումը՝ կապված նրանց կենցաղի ու բնակավայրի հետ:

ա) Միանցքանիները (յեխիդնան, բաղակառուցը) վորպես կաթնասունների ամենապրիմիտիվ ներկայացուցիչներ:

բ) Պարկավորներ. Պարկավորների կաղմության և նրանց բազմացման առանձնահատկությունները: Պարկավորների ունեցած ծավալումը անցյալ յերկրաբանական ժամանակներում:

գ) Միջատակերները և ձեռքաքանիները (չղջիկները) վորպես ավելի քան սորիմիտիվ ընկերքային կաթնասուններ: Խլուրդի և չղջիկի կառուցվածքի ու կենսաբանության առանձնահատկությունները կապված նրանց կենցաղի ու սերնդի հետ:

դ) Կրծողները վորպես մանր կաթնասունների ամենատարածված և բազմազան խումբ: Կրծողների պատճառած վնասները:

ըը և ոգուտը : Պայքարի միջոցները կրծող վնասաբարների դեմ :

յե) Գիշատիչները և նրանց անառոմիական-կենսաբանական առանձնահատկությունները՝ կազմակերպության հետ : Ընտանի չների զանազան ցեղերն ու սրանց վայրի նախնիները : Գիշատիչների պատճառած վնասները և ոգուտը :

Արգելանոցների նշանակությունը ԽՍՀՄ-ում ամենաարժեքափոր ցեղեր տարածելու և նրանց ակկլիմատիզացիայի յենթարկելու գործում (սամույլ, ջրասամույլ, աղվես, սկրու, կղարքիլլի) :

 տիչների մեջ յենթակարդ : Այս կարդի արհեստագործական նշանակությունը :

է) Կիտազգիները վորպես յերկրորդաբար-ջրային կաթնառուներ : Գրելանույան կետի կառուցվածքի առանձնահատկությունները : Կիտազգիների արհեստագործական նշանակությունը :

ը) Սմբակվորները և նրանց ստորաբաժանումը՝ անդուդամատ և զուգամատ սմբակավորների, չվորոճողների, ուղտերի և յեղջուրավորների (վորոճողների) :

թ) Կնիքավորները և նրանց կառուցվածքի առանձնահատկությունները : Փերի մերձավոր նախնիների մահացումը սառցի գարաշը անում :

ժ) Կապիկները և նրանց ստորաբաժանումը տակաքիթ, նրբաքիթ կապիկների, մարդակերպ կապիկների :

Ընտանի կաթնասունների արհեստական բուծումը և նրանց ծագումը : Կաթնասունների ամենապլիսալոր կարգերի ծագումը (սմբակավորների, զիշատիչների, միջատակերների) :

Կաթնասունների զասի ընդհանուր բնութագիրը :

Ցուցադրում : Մկան կամ հաղարի հերձումը :

## ԲՈՒԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ\*)

ԲԱՅԱՏՐԱԿԱՆ

Բուսաբանության դասընթացը, ավելի արդյունավետ անցնելու համար, ուսման պլանով փոխադրվում է յերկրորդ կեռամյակ, դարնանային ժամանակ, վորը հնարավորություն կտարուսական կենդանի որինակներով յաւրացնելու ամբողջ «Ակնաբերուսական աշխարհի վրա» բաժինը, թե դասարանում, և թե սպատ բնության մեջ՝ եզրկուրսիաների ժամանակի։ Բույսերի սիստեմատիկայի ուսումնասիրությունը բուսական աշխարհի

<sup>\*)</sup> Ծագիլը ոռւսերենից թարգմանել և հայերեն թարգմանությունը  
խմբագրել և պըսֆ. Ավ. Տ Պ Պ Ջ Մ Հ Ա Ն ը.

կենդանի ներկայացուցիչների վրա՝ ավելի ամուր, հաստատուն զիտելիքներ և ունակություններ կտա, հնարավորություն կտա ուսումնասիրողներին զործնականորեն ծանոթանալու բույսերի ընորոշումներին, բնության մեջ եքսկուրսիաներ կատարելու մեթոդիկային, կոնսերվեյտ տեխնիկային, բույսերի հերբարիզացիային, տախտակներ և ժողովածուներ կազմելուն։ Բուսաբանության ուսումնասիրությունը զարնանը թույլ կտա ուսանողներին լավ ծանոթանալ տեղական Փլորայի զարնանը ծաղկող այն բույսերին, վորանց ծանոթությունն անհրաժեշտ է ըստ տարրական զպրոցի ծրագրի։ Բացի դրանից զարնանն է հնարավորություն ստեղծվում ծրագրի բոլոր բաժինների վերաբերմամբ ավելի խորունկ և ավելի եֆեկտավոր փորձեր գնել և դործնական աշխատանքներ ու դիտողություններ կատարել։

Ի նկատի ունենալով, վոր ծրագիրն անցնելու ժամանակ ուսանողները տարբական դպրոցում աշխատելու համար հարկա- վոր ունակություններ պետք է ստանան, անհրաժեշտ է կենդա- նի անկյունում զնել տեսական այնպիսի դիտողություններ ու աշխատանքներ, վորոնք կատարվում են տարբական դպրոցում, որինակ՝ սերմերի ծլեցում տարբեր պայմաններում, դիտողու- թյուններ ծիլերի դուրս գալու, նրանց աճի վրա, աշխատանք- անազան բույսերի վոստերի վրա, բազմացում մատերով և այլն:

Դասընթացի ծավալին և ծրագրի խնդիրներին համապատասխան կենդանի անկյունում պետք է լինեն բույսերի զանազան խմբերի ներկայացուցիչներ :

Անհրաժեշտ է աքլարիումներում ունենալ ելողիա, վալիսներիա, յեղջերատերել ( роголистник ), փետրատերել ( перистолистник ), ջրապ ( Limna ) և այլն:

Յամաքային բույսերից պետք և ունենալ՝ տրաղեսկանցիս, պատառուկ, վայրի խաղող, գարնանածաղիկ, խորդենի(գերան), զանգակածաղիկ (ՓԱԿԵԱ), փամփշտուկ)=ծովասեղ(ՓԱԿԵԱ) սոխաբույսեր, չորային ըրջանների բույսեր՝ կողիներ (կակտուներ), աղավիներ, հալվե՝ փշատերեվներից՝ կիսպարիսներ և նոճներ, փրանց սերմերից հեշտությամբ կարելի յե աճեցնել.

արմավենիներ՝ վորպես միաբուն բույսերի ներկայացուցիչներ, վորոնք նույնպես հետությամբ աճեցվում են սերմերից:

Մարտ ամսին կենդանի անկյունում պետք է լինեն զանազան ծառերի կտրած ճյուղեր:

Ապրիլ-մայիս-հունիսին կենդանի անկյունում պետք է լինեն տեղական ֆլորայի գարնանը ծաղկող բույսերի բոլոր ներկայացուցիչները:

Ամեն որ դիտելով այդ բույսերը կենդանի անկյան մեջ՝ ուսանողները հաստատապես կհիշեն դրանք և կկարողանան այնուհետեւ ճանաչել այդ բույսերը թե անտառում և թե դաշտում:

Կենդանի անկյունում պետք է պատրաստվեն նաև բուսաբանական նյութեր՝ կենդանի վիճակում ողտադորձելու համար, այսինքն՝ բակտերիաների կուլտուրաներ, միարժիշտ ջրիմուռների կուլտուրաներ, բորբոսասունկերի կուլտուրաներ, մամուռի նախածիւերի, ճարխոտերի և միջատակեր բույսերի ծլանքների կուլտուրաներ, յեթե միայն նրանք կան տեղական ֆլորայում: Ծրագիրը հաջողությամբ յուրացնելու համար, կենդանի նյութից բացի, անհրաժեշտ և ունենալ նաև սպիրտային և չոր բաշխելի մատերիալ, վոր կլրացնի պակասող կենդանի նյութը, որինակ՝ ծածկասերմ, բույսերի պտուղներ և սերմեր, փշատերելների կոներ, մամուռներ, քոսեր, ճարխոտեր, մնկեր և այլն: Կենսաբանության կարինետում պետք է լինեն թեմատիկական և սիստեմատիկական հերթարիխներ, բույսերի ճեղքանությանը, բնախոսությանը և դասակարգությանը վերաբերյալ տախտակներ, եքսկուրսիոն պիտույքներ, մանրադիտակներ, խոչըրացույցներ, միկրոսկոպիական պրեպարատներ բույսերի անատոմիային վերաբերյալ, բանկաներ և ուսակտիվներ՝ բույսեր կոնսերվելու համար, բանկաներ, թուղթ և մամուլներ՝ բույսեր չորացնելու համար, խավաթ-ուղթ՝ պատի տախտակներ և ժողովածուներ կազմելու համար, անոթների և ուսակտիվների հավաք՝ ծրագրում նշված գործնական աշխատանքների համար:

Եերկարատև դիտողություններ պահանջող գործնական ամբողջ աշխատանքներ կարող են դրվել կենդանի անկյունում՝ իրենց մշակման համար առանց հատուկ սահմանված ժամեր ունենալու. այսպես՝ «Սերմ» բաժնի համար աշխատանքներ՝ զա-



Նաղան պայմաններում սերմեր ծլեցնելու վերաբերյալ ծլունակության և տնտեսական պիտանիության վորոշում, դիտողություններ սերմերի ծիլերի վրա: «Արմատ» բաժնի վերաբերյալ՝ խորձեր ջրային կուլտուրաների, գեռարոպիզմի վերաբերյալ և այլն: «Տերե» բաժնի համար՝ փորձեր ածխածնի յուրացման վերաբերյալ ստվերավորված տերեկի միջոցով, ջրի գոլորչացումը տերեկներով, ելողեայի տերեկների թթվածին արտադրելու լույսի տակ, փորձեր հելիարոպիզմի վերաբերյալ: «Յողուն» բաժնի համար՝ փորձնը ցողունի կեղեկին ողակածն հանելու վերաբերյալ, փորձեր արմատային ճնշման վերաբերյալ, դրա յեկող հոսանք, ճյուղեր արձակելը և այլն: «Բույսերի բազմացումը» բաժնի համար՝ փորձեր արհեստական փոշոտման, վեղետատիվ բազմացման (մատեր, տնկիներ) վերաբերյալ:

Մնացած գործնական աշխատանքները, վոր մատնանշված են ծրագրում, բացի դասարանական պարապմունքների ժամերին նրանց մշակումից, կարող են մշակվել և խմբակային պարապմունքների ժամանակ, որինակ՝ բույսերի վորոշումն ըստ վորոշչիչ, հողերի անալիզ, միկրոսկոպիական պրեարատների պատրաստում, հերբարիզացիա և այլն:

Ինքն ըստինքյան հասկանալի յե, վոր ծրագրում նշված բոլոր ցուցադրումներն ու գործնական աշխատանքները, յուրաքանչյուր տեխնիկումում կատարվում են համաձայն նրա ժամանակի բյուջեյի և դիտողական պիտույքների ու լարորատորական պարագաների սարքավորման:

Ծրագրի յուրացման ժամանակ, ուսումնական այլ պիտույքների հետ մեկտեղ, բավականաչափ ոժանդակություն և ցույց տալիս դասի ժամանակ կինոժապավենների և եպիզիոսկոպավոդիալիտիկաների ու նկարների ցուցադրումը: Նեղաթաղանձագարատը, իր հեշտ սարքավորման և գործադրման չնորհիվ, թույլ ե տալիս կինոժապավենների ցուցադրումները կիրարկել վորպես շարքային ուսումնական պիտույք, ըստ վարում հնարավոր և ողտագործել վոչ վողջ ժամագիւնն ամբողջապես, այլ միայն նրա առանձին կադրերը, յեթե այդ հարկավոր է դասի ընթացքի համար:

Կարելի յե հանձնարարել. «Արմատը վորպես ջրահամային

անդառության որդան» թեմայի համար՝ «Ավոտի լրջանառությունը բնության մեջ» Փիլմը։ «Բույսերի աճը» թեմայի համար՝ «Յողում» բաժնի կապակցությամբ— «Բույսերի աճը» Փիլմ։ «Տերև» թեմայի համար՝ «Արևը վորպես եներգիայի աղբյուր» Փիլմը (2 և 3 մասերը)։ «Բույսերի բազմացումը» թեմայի համար՝ «Հարավը Տամբովում» Փիլմը 3 մասից բաղկացած։ «Ակնարկ բուսական աշխարհի վրա» բաժնի համար՝ «Հաշարույսերի մրիկը», «Բըինձ», «Յեղիպացորեն», «Բամբակ», «Կենաֆ» Փիլմերը։

Գարնանը՝ ապրիլի վերջերին, մայիսին, հունիսի սկզբներին՝ «Ակնարկ բուսական աշխարհի վրա» բաժնը գրեթե ամբողջապես կարելի յե անցնել կենդանի մատերիալի վրա՝ ըերելով կենդանի անկյուն և բաշխելով այն դասի ժամանակ վորպես բաշխման մատերիալ։

Ի լրացումն 1934 թվի ծրագրի, միանդամայն անհրաժեշտ և գործնականապես, կենդանի որինակների վրա ուսումնասիրել գործնուկների, վարդածաղիկների և չուշանների ընտանիքները։ Քանի վոր հենց այս ընտանիքների ներկայացուցիչները մեծ մասմբ հանդիսանում են մեր գարնանային վոչ ծաղկող բույսերը և ծանոթությունը նրանց հետ պահանջվում է տարբական դըպոցի ծրագրով։

Այն բույսերը, վորոնք չեն կարող ուսումնասիրվել դասերի ընթացքում և եքսկուրսիաների ժամանակ կենդանի մատերիալի վրա, պետք է ուսումնասիրվեն չոր և սպիրտային բաշխական մատերիալի ու այնուհետեւ տախտակների և հերբարիաների վրա։

Բայցի գասարանական պարզմունքներից և եքսկուրսիաներից, սովորողներին կարելի յե տալ ինքնուրույն առաջադրանքներ։ Վորոնք հավաքած բույսերը, հավաքել տերենների, ծաղկափթթյունների տիպերի, տերենների գասավորության տիպերի ժողովածուներ, քոսեր, մամուններ, ձարխոտակերպներ և այլն։ Հավաքած ամբողջ նյութը պետք է մշակել արտադասյա ժամանակամիջոցում։ Մշակման ժամանակ պետք է ցուցումներ տրվեն հերբարիզացիայի, կոնսերվելու, ժողովածուներ կազմելու վեհաբերյալ և այլն։ Ուսանողների ձեռքով պատրաստվածը թողքաբերյալ և այլն։

նըզում և կենսաբանական կարինետում և տրվում և յերբորդ կուրսերի ուսանողներին վորպես պիտույք մանկավարժական պրակտիկայի համար:

Ըստ հնարավորության պետք և բուսաբանական եքսկուրսիաների կատարվեն դեպի անտառ, դեպի դաշտ, դեպի ջրամբար ծանոթանալու ջրային բույսերին, դեպի խորհանակեսություններ և կալոնտեսություններ, յեթե նրանցում վորեւ տեխնիկական կուլտուրաներ են մշակվում, դեպի բուսական սեկտերին կայաներ, դեպի գավառագիտական թանգարան և այլն:

Առաջին կուրսի բոլոր ուսանողներին ամսավահամար պետք է տրվեն անհատական առաջադրանքներ. կազմել հերբարիաներ տեղական չըջանի կուլտուրական և տեխնիկական բույսերի, հերբարիաներ մոլախոտերի, ժողովածուներ պառակների և սերմերի, տախտակներ ըստ տերենների ձևերի, տերենների դասավորության, ըստ տերենների աշխանային գունավորության, ըստ տերենի ձևափոխությունների և այլն:

Հետևյալ տարվա աշխանն առաջադրանքը պետք է ստուգվի և ուսանողների կողմից հավաքված նյութերը, համապատասխան մշակումից հետո, պետք է պահպան մանկավարժական ուսումնաբանների բնագիտական կարինետում: Հարկավ, յուրաքանչյուր առանձին ուսումնարանում, տեղական պայմանների համաձայն, ծրագրի ուսումնասիրությունը կարող է յուրահատուկ բնույթ ունենալ: «Ակնարկ բուսական աշխարհի վրա» բաժինն անցնելու ժամանակ բույսերի ընտրությունը, գործնական աշխատանքներն ու եքսկուրսիաները նշանակալից չափով կախված են տեղական պայմաններից և, անկախ ծրագրային պահանջներից, պետք է նպատակ ունենան սովորեցնել ուսանողներին գաղառագիտական նյութն ողտագործելու աշխատանքի համար:

## Ծ Ր Ա Գ Ի Բ

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բուսաբանությունը վորպես գիտություն բույսերի կազմության և կյանքի մասին: Բուսաբանության ուսումնասիրության նշանակությունը վորպես աշխատական հողագործության

մերակառուցման գինք: Բույսերը վորպես աղբուր արդյունաբերական և գյուղատնտեսական հումուզի: Բուսաբանությունը վորպես ԽՍՀՄ-ի արտադրական ուժերի աճման գործոններից մեկը: Բուսաբանության ուսումնասիրության նշանակությունը Պալրոցում:

## ԲՈՒՑՍԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿՅԱՆՔԸ

1. Բույսերի արտաքին և ներքին կազմությունը  
(ներածության հետ— 5 ժամ)

Բույսի գլխավոր գործարանները՝ արմատ, ցողուն, տերև, ծաղիկ և նրանց՝ բույսի կյանքի համար ունեցած՝ նշանակությունը: Բույսերի բջջային կազմությունը:

Բջջային ուսմունքի պատմությունը: Բուսական բջջի կաղմանթյունը՝ թաղանթ, պրոտոպլազմա, կորիզ, վակուոներ, բջջահյութ, բջջային պարփակումներ: Պրոտոպլազմայի, կորիզի և բջջի այլ որգանոիդների (գործարանակերպների) գերը: Բույսի բաղադրության մեջ մտնող քիմիական տարրերը: Անորդանական և որգանական նյութեր: Որգանավորված և վոչ որգանավորված բնության քիմիական տարրական բաղադրության միասնությունը: Բուսական բջիջը վորպես բույսի կենզանի տարր: Կենդան բջիջի կենսական պրոցեսները— նյութերի փոխանակություն, չարժողություն, դգացողություն, աճեցողություն, բաղմացում և մահ: Կենդան սպիտակուցի վորակային առանձնահատկությունը վորպես տարրերություն անկենդան բնությունից: Գաղափար բուսական հյուսվածքների մասին: Կազմակերպող, ծածկույթային մեխանիկական, հաղորդիչ հյուսվածքներ:

Ցուցադրումներ. 1) Սոխի բջիջների գիտումը միկրոսկոպի տակ. 2) Պրոտոպլազմայի շարժումը վալիսներին կամ ելողեամբ բջիջներում. 3) բջիջների կարիոկինետիկ բաժանման առանձին աստիճանների գիտումը միկրոսկոպի տակ սոխի արմատում:

2. Աերմ, նրա կազմությունը և ծլման պայմանները (5. ժամ)

Միաշաքիլ և յերկշաքիլ բույսերի սերմերի կազմությունը և Սերմերի քիմիական բաղադրությունը, սպիտակուցներ, ոսլա և յուղեր պարունակող սերմեր : Սերմերի ծլման պայմանները : Բույսերի նոր կուտուրաներ աճեցնելու կախումը բարեխառնությունից :

Նյութերի փախարկումները ծլու սերմերի մեջ, փերմենուներ և նրանց գերը : Ծլու սերմերի չնչառությունը, բույսի գարգացումը սաղմից : Սերմերի ծլեցման խթանումը, սերմերի բիոնտիգացիան, յարովիգացիան : Սերմերի նախապատրաստումը ցանքսի համար : Սերմերի ծլունակության և տնտեսականուրենալիտանական պատահական վորոշումը : Պայքար ցանքերի աղբոտության դեմ : Սորտական սերմերի նշանակությունը բերքատվությունը բարձրացնելու համար : Պետական սերմնային վերահսկողության կազմակերպումը :

Ցուցադրում սերմերի չնչառության յերեվույթների :

Լաբորատորական աշխատանքներ . 1) Ուսումնասիրությունը միաշաքիլ և յերկշաքիլ բույսերի սերմերի կազմության . 2) Դիտողություններ միաշաքիլ և յերկշաքիլ բույսերի սերմերի ծլուման վրա . 3) Ծանոթություն սերմերի քիմիական անալիզի հետվարոշում ջրի քանակի, ածխածնի հայտնաբերումը այրման միջոցով . սպիտակուցների, ածխաջրերի և ճարպերի հայտնաբերման յեղանակները սերմերի մեջ . 4) ալյուրի կոպիտ անալիզը :

Լաբորատորական աշխատանքներ՝ վորոշելու համար սերմերի ծլունակության տոկոսը, տնտեսապես պիտանիությունը և տեսակավորումը :

3. Արմատը վորպես ջրահանքային սննդառության գործարան (5. ժամ)

Արմատի մակրո—և մկիրոսկոպիական կազմությունը : Արմատների ձևափոխությունները : Արմատի աճի առանձնահատկությունները : Գեռտրոպիզմ : Աղերի ջրային լուծույթների

ծծման պրոցեսները մաղարմատների միջոցով : Կենդան պլոտո-  
պլազմայի դերը չբահանքային սննդառության պրոցեսների  
մեջ : Թուրպորի և պլասմոլիզի յերեսույթները : Մաղարմատների  
լուծող աղղեցությունը : Եյութերի փոխադրությունը արմատի  
միջով : Արմատային ճնշումը : Բույսի հողից ստացած տարրերը :  
Ջրային կուլտուրաների մեթոդի նշանակությունը : Հողի պա-  
րաբացման և մեքենական մշակման նշանակությունը բերքատ-  
վությունը բարձրացնելու համար : Հողի գոյացումը . նրա կազ-  
մությունն ու բարարությունը : Հողի ջրային ռեժիմը (խոնա-  
վառարություն, ջրաթափանիկանություն, մաղականություն,  
կլանման ընդունակություն) : Պարաբացման տեսակները և  
պաղափոխություն : Պարաբացումներ լրել և թերի, ուղղակի և  
անուղղակի ներգործող, բնական, կանաչ և հանքային : Կուլտուր-  
վացման նշանակությունը դյուլատնտեսական կուլտուրաները  
բարձրացնելու համար : Արհեստական ջրային կուլտուրաներ :

Ցուցադրումներ . 1) արմատի ընդլայնական հատածի միկրոս-  
կոպիֆական պրեզարատաների դիտում . 2) միկրոսկոպի տակ ար-  
մատի ծայրապատյանի և արմատի մաղմզուկների դիտում . 3) արմատների լուծող աղղեցությունը մարմարե թիթեղի վրա :

Հողերի քիմիկական և ֆիզիկական հատկությունները :

Լաբորատորական աշխատանք . փորձեր ոսմոսի վերաբերյալ -  
պլասմոլիզի յերեսույթները :

Կիսո Փիլմ՝ «Աղոտի շրջանառությունը բնության մեջ» :

4. Տերեւ վորպիս բույսի ողային սննդառության, ջրի գո-  
լորշիացման և շնչառության գործարան (5 ժամ) :

Տերեւի մակրո— և միկրոսկոպիկական կազմությունը : Մաշկը :  
Հերձանցները, նրանց կազմությունն ու դերը : Տերեւի փոխադրա-  
կան ճանապարհները և մեխանիքական հյուսվածքը, նրանց  
դասավորությունն ու դերը : Տերեւի փափուկ մասը : Քլորիֆիլի  
հատիկները, քլորոֆիլի գոյացման պայմանները (լույս, յեր-  
կաթի ներկայություն) : Ածխածնի յուրացումը : Ֆոթոսինթեզ:  
Ռուլայի և այլ որգանական միացությունների գոյացումը : Ֆեր-  
մենտների դերն այդ պրոցեսում : Կանաչ բույսերի նշանակու-

թյունն որդնական աշխարհի կյանքի և ժողովրդական տնտեսության համար : Քաղաքների կանաչպարզման նշանակությունը ողի առողջացման համար : Բույսերի աճեցումը ջերմոցներում ելեքտրական լույսի տակ : Ֆոթոպելիոդիզմ : Զանազան կուտուքական բույսերի շարժումը դեպի հեռավոր հյուսիս : «Ողի պարարտացումը» ածխաթթու գաղով — հասուկ խողովակների միջոցով Փարբիկա-գործարանային արդյունաբերության ժամանակ, վորպես բերքատվությունը բարձրացնելու միջոց :

Զրի գոլորշիացումը տերեններով . այս պրոցեսի նշանակությունը : Բույսերի պաշտպանողական հարմարանքները յերաշտի դեմ պայքարի գործում : Յերաշտակայուն ձևերի կենսաբանական առանձնահատկությունները : Յերաշտի դեմ պայքարի գվազոր միջոցառումները : Կանաչ տնկվածքների և պաշտպանող անտառային շերտերի նշանակությունը : Յերեաթափի, նրա պատճառները և բույսերի կյանքի համար ունեցած նշանակությունը :

Բույսերի չնչառությունը : Եյութերի փոխանակությունը բույսերի մոտ : Ասիմիլացիա և դեսիմիլացիա . նրանց հակադրությունը և փոխադարձ կապը : Այս պրոցեսների քիմիական և եներդեսիկական կողմերը : Հասկացողություն չնչառական ֆերմենտների մասին : Ածխածնի շրջանառությունը բնության մեջ : Տերեկի ձեռախությունները և նրանց կենսաբանական նշանակությունը : Ցուցադրումներ . 1) կինոֆիլմ՝ «Արեն եներգիայի աղբյուր» . 2) դիտում տերեկի պրեպարատների միկրոսկոպի տակ, 3) ելուղեայի տերենների թթվածին արտադրելլ լույսի տակ (հնարավոր և նաև ելեքտրական լամպի տակ), 4) սուլայի սոսաջացումը տերենների մեջ լույսի տակ :

5. Ցողուն, նրա կազմությունը և բնախոսական նշանակությունը (4 ժամ)

Ցողունի դերը բույսի կյանքում : Ցողունի մակրո—և միկրոսկոպիական կազմությունը : Ցողունի մեխանիկական և փոխադրական տարրերի նշանակությունը : Կամբիումի նշանակությունը, ցողունի հաստացումը . ցողունի աճը յերկարությամբ . գագաթնային բողբոջ . աճման կոնը : Բույսերի աճի ազդակները : Ցողու-

Նի աճի կարդավորումը այդեղործության մեջ:

Անդասոու նյութերի տեղաշարժը ցողունի միջով: Վերընթաց և վարընթաց հոսանք. նրանց պատճառները: Ստորերկլրյա ցողունները և նրանց դերը բույսի կյանքում: Ցողունի այլ ձեւափոխություններ: Զանազան ցեղերի փայտանյութի և յենթակեղերի (քրծենի) արդյունաբերական ոգտագործումը:

Ցուցադրումներ. 1) Դիտողություն վերընթաց հոսանքի ձանուպարհների՝ հատած ճյուղերի վրա. 2) Միկրոսկոպի տակ միաշաքիլ և յերկշաքիլ բույսերի ցողունների հատածների դիտում, 3) թելավոր կուլտուրաների ցողունների դիտում:

Կինոֆիլմ՝ «Բույսերի աճը»:

Լաբորատորական աշխատանքներ բողբոջների կազմություններ զարգացումն ուսումնասիրելու համար, դիտողություններ ցողունի աճի:

## 6. Ծաղկավոր բույսերի բազմացումը (5 ժամ)

Հասկացողություն վեղետատիվ և սեռական բազմացման ժամանակ: Վեղետատիվ բազմացման տեսակները (արմատներ, տընկիներ, բողբոջներ, պալարներ, սոխուկներ, պատվաստացյուղեր): Մոլախոտերի վեղետատիվ բազմացումը և պայքարի միջները նրանց դեմ: Պատվաստ: Պատվաստի նշանակությունը պաղաբուծական և բանջարաբուծական գործում:

Ծաղկիլ վորպես սեռական բազմացման գործարան: Ծաղկի զարգացումը: Ծաղկի կազմությունը: Փոշոտում քամու և միջամաների միջոցով: Խաչաձև փոշոտումն ապահովող հարմարանքներ: Ծաղկավոր բույսերի բեղմնավորության պրոցեսի եյությունը: Արհեստական փոշոտում, նրա դերը բույսերի նոր ցեղեր առաջացնելու գործում: Միջուրինի և Բերբանկի աշխատանքները: Խորհրդային սելեկցիոն կայանների նվաճումները ցրտակայուն, յերաշտակայուն, բարձրարդյուն և հիվանդագիմացկուն կուլտուրաներ առաջացնելու գործում:

Պտուղների և սերմերի զարգացումը: Պտուղների տեսակները: Պտուղների և սերմերի տարածումը:

Ցուցադրումներ. 1) Պատվաստի տիպերը. 2) որինակներ վե-

գետառիվ բազմացման. 3) «Միջուրինյան անկարանը» կամ «Հայվը Տամբովում»։ կինոժապավենների ցուցադրում։  
Լաբորատորական աշխատանք։ Ծաղկի և պառուղների կար-  
մաւթյան ուսումնասիրությունը. փոշու և սերմաբողբոջի գի-  
տումը միկրոսկոպով։

### 7. Ակնարկ բուսական աշխարհի վրա (21 ժամ)

Բուսական աշխարհի հիմնական խմբերը։ Բույսերի բաժա-  
նումը խմբերի և բույսերի դասակարգության նշանակությունը  
տեսության և պրակտիկայի համար։

### ա) Սպորավոր բույսեր (12 ժամ)

Բակտերիաներ. Նրանց կազմությունը, բիոլոգիան և տարա-  
ծումը։ Բակտերիաների գերը բնության, արդյունաբերության և  
գյուղատնտեսության մեջ։ Բակտերիաների գերը նյութերի  
չրջանառության գործում։ Խմորման և փոտոթյան պրոցեսները.  
սիլոսի և վշափնջի (փնջարմատի) բակտերիաները։ Հողային և  
ոլալարային բակտերիաներ։ Պարագիտ բակտերիաներ և պայքարը  
նրանց դեմ։ Պատվաստի մեթոդները։

Ջրիմուները վորպես բուսական աշխարհի հնագույն խոռումը։  
Ջրիմուների կազմությունը։ Նրանց բազմացման բարձազանու-  
թյունը։ Միարջիջ և բազմարջիջ ջրիմուներ։ Անուշ ջրերի ջրի-  
մուները։ Ծովային ջրիմուներ։ Նրանց տեխնիկական և դյու-  
դատնտեսական նշանակությունը (սոսինձ, պարարտանյութ,  
կիր)։ Նրանց նշանակությունը յոդա— կալիումային արդյունա-  
բերության մեջ։

Սունկեր. ընդհանուր հասկացողություն սունկերի կազմու-  
թյան և բիոլոգիայի մասին։ Դրոժային, բուրբոսային, տնային,  
գլխարկավոր սունկոսալրովիտներ։

Սունկերը վորպես կուլտուրական բույսերի հիվանդություն-  
ներ առաջացնողներ և պայքար նրանց դեմ (մըկ, կարտոֆիլի  
հիվանդություն, հաճարաժանդառ, ժանդ)։

Քոսերը վորպես սունկերի և ջրիմուների սիմբիոզ։ Քոսերի

Նշանակությունը, վորպես բուսական աշխարհի պիոներներ : Քո—  
սերի նշանակությունը տունդրային յեղջերվարության մեջ :

Մամուռները վորպես ցամաքային բույսերի հնագույն խումբ :  
Անցում ջրիմուռներից ցամաքային բույսերին : Ստորին և բարձ-  
րագույն մամուռներ : Մամուռների կազմությունն ու բազմա-  
ցումը : Տերեալոր մամուռների դերը ջրամբարների ճահճացման-  
և տորֆի առաջացման դործում :

բ) Զարխոստեր և մերկասերմեր

Զարխոստերը, ձիաձետները, գետնամամուռները վորպես  
բարձրագույն անթափորներ . ձարխոստակերպաների բազմացումը,  
սերուղների հաջորդականություն (սերնդափոխություն) : Բա-  
ժո ձարխոստակերպաներ, քարածուխի գոյացումը :

Մերկասերմ բույսերը վորպես անցումն սպորափորներից  
ծաղկավոր բույսերին : Ընդհանուր բնութագրում, բազմացում և  
արդյունաբերական շահագործում :

Ցուցադրումներ . 1) դիտումն միկրոսկոպի տակ ջրիմուռնե-  
րի, դրոժի սունկերի, ձիաձետի սպորների և ձարխոստի սպորան-  
դիաների; 2) Ծանրթություն անցած բույսերի տիսկիկ ներկայա-  
ցուցիչների հետ :

գ) Ծածկասերմ բույսերը կուլտուրական բույսերի որինակ-  
ների վրա (9 ժամ)

Միաշաքիլ և յերկշաքիլ բույսերի՝ վորպես բուսական աշ-  
խարհի բարձրագույն ներկայացուցիչների՝ ընդհանուր բնութա-  
գերը: Կուլտուրական բույսերի ծագումը :

Շուշանազգիներ (հովտաշուշան, սպիտակ շուշան, արևելյան-  
հակինթ) :

Հացաբույսեր և կերաբույսեր: Ծաղկի կազմությունը և փո-  
շոտման յեղանակները: Ցորենի, հաճարի, վարսակի և այլ հա-  
ցաբույսերի ծագումը: Կերաբույսեր: Կերային բաղայի նշանա-  
կությունը անասնաբուծության զարգացման համար:

Գորտնուկները (անտառի պուտ, վոսկեծաղիկ կամ ցինդր-

գորտնուկ) վորպես ներկայացուցիչներ վաղ ծաղկող բույսերի նրանց բիոլոգիան:

Լորարույսեր, նրանց բնութագիրը՝ ամենակարևոր մշակույթների ներկայացուցիչները՝ սոյա, սիսեռ, լոբի, վոստ, առվույտ, վիկ, յեղիպտոլոսն: Լորաբույսերի գերը ցանքսաշրջանառության մեջ:

Խաչածաղիկ բույսեր. ԽՍՀՄ-ում աճեցվող մշակույթների բնութագրումը. կաղամբ, բողկ, շաղդամ և այլն, նրանց տարատեսակները և նշանակությունը սննդի հարցում:

Մանանեխը և գոնզեղը (ранс) վորպես յուղատու մշակույթներ:

Կանեփազգիները, վուշազգիները, փիփերքները (մոլոչները) վորպես ներկայացուցիչներ թելատու և յուղատու մշակույթների: Ծաղկի, ցողունի և պտղի կաղմության առանձնահատկությունները:

Մորմազգիներ. պոմիդոր, կարտոֆիլ, ծխախոտ. այս բույսերի մշակույթները, նրանց նշանակությունը:

Վարդածաղիկներ. խնձորենիներ, բալենիներ, մորի: Ծաղկի կաղմության առանձնահատկությունները, տնտեսական նշանակություննը:

Բարդածաղիկներ, ծաղկի կաղմության առանձնահատկությունները և ծաղկափթթյուններ: Արևածաղկի, նրա ծաղկումը և նշանակություննը:

Համառոտ տեղեկություններ բուսական նոր մշակույթների բուծման մասին. ջուտ, կենդիր, կանեփ, ռամի: Կառւչուկատուներ: Մշակույթային բույսերի ձևափոխությունները: Ինչ և արվում այս ռազզությամբ ԽՍՀՄ-ում: Զեռք բերված նվաճումները. բացվող հեռանկարները:

Ցուցադրումներ. հերբարիաներ և կենդան նմուշներ՝ քննության առնված խմբերի ներկայացուցիչների:

Լարորատորիական պարապմունքներ. բույսերի վորոշումներ վորոշիչի միջոցով. հերբարիզացիայի մեթոդներ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսանողների համար

1. Տիմիրյան, Բույսի կանքը. 2. Ժածովսկի. Ботаника для пе<sup>т</sup>техникумов. 3) Венчиков и Исаин. Растение, его жизнь, строение и польза, 1933 г. 4) Никонов. Ботаника. 5) Определители растений Маевского или Инатьевса. 6) Никонов. Практические занятия по ботанике в школе и в природе.

## ԴԱՍԱՑՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1) Ենգելս. Անտի Դյուցինգ. 2. Акад. Келлер. Ботаника с основами физиологии, изд. 1932—33 г. г. 3) Исаин. Ботаника. 4) Комаров. Происхождение культурных растений. 5) Максимов. Физиология растений, изд. 1932 г. 6) Талиев. Основы ботаники в эволюционном изложении, изд. 1931 г. 7) Каминский. Основы семеноведения. 8. Вильямс. Общее землеведение, изд. 1931 г. 9) Горшков. И. В. Мичурин и его работы. 10) Вильямс. Лютер Бербанк и его труды, изд. 1924 г. 11) Маевский. Определитель растений флоры средней России. изд. 1933

## ԵՎՈԼՈՒԽԻՑԻՆ ՈՒՍՄՈՒՆՔ\*)

### ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

- Եվոլուցիոն ուսմունքի դասընթացի ծրագրին հատկացված  
և 63 ժամ, վոր բաշխված և հետեւյալ կերպով.
1. Ներածություն— 1 ժամ .
  2. Տիեզերքի ծագումը և յերկրի պատմությունը— 16 ժամ .
  3. Եվոլուցիոն ուսմունքի հիմունքները : Եվոլուցիայի ուղիների հայտնաբերման մեթոդները— 8 ժամ :
  4. Փոփոխականության ու ժառանդականության մասին յեղած դիտությունը և նրա նշանակությունը— 12 ժամ .
  5. Եվոլուցիոն գաղափարների զարգացումը— Եվոլուցիոն գաղափարները բիոլոգիայի մեջ մինչեւ Դարվին— 6 ժամ .
  6. Դարվինը և նրա ուսմունքը— 10 ժամ .
  7. Մարդու ծագումը— 6 ժամ .
  8. Կյանքի ծագումը յերկրի վրա— 4 ժամ :
- Քանի վոր ուսման պլանում հանքարանության և յերկրաբանության ինքնուրույն դասընթաց չկա, ուստի յերկրաբանական նյութի մի մասը մացված և Փիզիկական աշխարհագրության դասընթացի մեջ, իսկ հանքարանության և յերկրաբանության վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքները տրվում են ծրագրի առաջին՝ «Տիեզերքի ծագումը և յերկրի պատմությունը» գլուխում :

Բուսաբանության և կենդանաբանության դասընթացներից բուսական և կենդանական որդանիդմների կազմության և կենաքական ֆուկցիաների մասին պատկերացում ստանալով՝ ուսանողները պետք են ծանոթանան այն գիտական ընդհանրացումներին,

\*) Ծրագիրը սուսերենից թարգմանել և հայերեն թարգմանությունը խմբագրել են պրոֆ. Ալ. Տեր-Պողոսյանը :

վորոնց հիման վրա որդանական աշխարհի որենքներն են բացահայտվում :

Ի նկատի ունենալով այն հսկայական նշանակությունը, վորմեր որերում ձեռք ե բերել զենետիկան, անհրաժեշտ ե առանձնացնել այն, վորպես հասուկ բաժեկն : Գենետիկան կարենոր կետ և հանդիսանում բուսաբանության և անասնաբուծության խընդիրները լուծելու համար . նա սելեկցիայի համար տեսական հիմք ե տալիս, ճիշտ մոտեցում ե տալիս մարդկային զենետիկայի (անտրոպոգենետիկայի) հարցերին, այլև նյութ և ընձեռնում եվլուցիայի տեսության հիմնական մոմենտները հասկանալու համար :

Վերջին յերկու բաժինները՝ «Մարդու ծագումը» և «Կյանքի ծագումը յերկրի վրա» հանդիսանում են յեղափակումներ : Այս բաժիններն ապահովում են վորոշակի սահման գծել կենսաբանական և սոցիալ-տնտեսական յերեվույթների միջև, հայտնաբերում են գիտության և կրոնի անհամատեղիությունը և զինում ապագա մանկավարժին ակտիվ պայքարի համար՝ կրոնի բոլոր արտահայտությունների գեմ, այդ պատճառով ել նրանք պետք ե առանձնապես խնամքով մշակվեն :

### ԾՐԱԳԻՐ (63 ժամ)

#### Ներածություն (1 ժամ)

Հասկացողություն եվլուցիայի մասին : Եվլուցիոն տեսությունը վորպես մատերիալիստական աշխարհայացքի բնական գիտական հիմք : Եվլուցիոն ուսմունքը վորպես հակակշռության մասին յեղած իդեալիստական և նպատակարանական (տեւելողական) հայացքների : Եվլուցիոն ուսմունքի նշանակությունը հակակրոնական պրոպագանդի մեջ : Իդեալիզմը և մեխանիզմը բուրժուական բիոլոգիայի մեջ : Գիտության ծաղկումը ԽՍՀՄ-ում՝ սոցիալիզմի համար վարած պայքարին պըսակտիկ մասնակցություն ունենալու հիմունքով :

I. ՏԻԵԶԵՐՔԻ ԾԱԳՈՒՄԸ ՅԵՎ ՅԵՐԿՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ  
(16 Ժամ)

Տիեզերքի մասին յեղած պատկերացումների դարձացումը՝ հին ժամանակներից սկսած մինչև մեր որերը։ Գլուխական տըլ-յալներ տիեզերքի ծագման և կազմության մասին՝ կը ո՞նի դեմ մղած պայքարում։

Տիեզերագոյացման ընդհանուր պատկերը։ Արեգակնային սիստեմի եվոլուցիան։ Լապլասի և Զինսի հիպոթեզները։ Հիմնական գաղափարներ յերկրի կեղևի ծագման և կազմության մասին։ Ցերկրի կեղևի քիմիական բաղադրությունը։ Գաղափար հանքային և լեռնային տեսակների մասին։

Մանոթություն այն կարևորագույն հանքերի հետ, վորոնք մտնում են լեռնային տեսակների կաղմի մեջ։ Ինքնածին տարրեր, սիլիկատներ, թթվածնային թթուների աղեր, ծծմբական, հալուղի, որդանական (կվարց, դաշտային շպաթ, փայլար, կալցիտ, դղումիտ, ապատիտներ, գիպս, քարաղ, մետաղահանքեր)։

Լեռնային տեսակների զանազան ձևերը։ Հրաբխային, նըստվածքային, ձևափոխական (մետոմորֆիկ) նրանց կաղմաւթյունը։

Ցերկրի կեղևի պատմությունը։ Ցերկրիս վրա կյանքի պայմանների կրած փոփոխությունների համառոտ ուրվագիծը՝ ըստ երաների և շրջանների։

Բուսական և կենդանական ձևերի եվոլուցիան։ Մարդու հանդես գալը։

II. ԵՎՈԼՈՒՑԻՇԽՈՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ. ԵՎՈԼՈՒՑԻՍՑԻ ՈՒՂԻՆԵՐԻ ՊԱՐՉԱԲԱՆՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ (8 Ժամ)

1. Համեմատական-անատոմիական և բնախոսական մեթոդ։ Հոմալոգ և անալոգ որդանները և նրանց տարբեր նշանակությունը եվոլուցիայի ապացուցման գործում։ Համեմատական անատոմիան և որդանիզմների կազմության միասնական պլանի հարցը։ Մնացորդ (ռուղիմենտ) որդանները և նրանց նշանակությունը։ Անցման ձևերը և նրանց եվոլուցիայի համար ունեցած նշանակությունը (պերիպատուս, պրոտոպատերուս)։

Բնախոսական ապացույցներ (արյունը և զուգավորումը վորպես մեթոդ՝ ձևերի մոտիկ աղջակցությունը վորոշելու դեպքում) :

2. Սաղմաբանական մերոդ : Վողնաշարավորների սաղմերի համեմատությունը : Սաղմային զարգացման վաղ աստիճանների նմանությունը վրայես ամբողջ որդանական աշխարհի մի ընդհանուր ծագում ունենալու ապացույցներից մեկը : Մյուլեր-Հեկ-կելի բիոգենետիկ որենքը (կանոնը) և նրա արժեքավորությունը անհատի և տեսակի զարգացման կապն ըմբռնելու համար : Այս կանոնի գերազահատումը և նրա մեջ անհրաժեշտ ուղղումներ մացնելը (ցենոգենեզ կամ սաղմային հարմարումներ, միենուն որդանի փունկցիայի փոփոխությունները՝ միշալայրի պայմանների փոփոխության հետեվանքով և այլն) : Ստորին կազմություննեցող կենդանիները բարձրագույն ձևերի կենդանի նախնիները չեն, այլ միայն ընդհանուր նախորդի այն հետավոր հետնորդները, վրանք իրենց սեփական ելուուցիան են անցել :

3. Հնեաբանական մեքոդ: Հնեաբանությունը վորպես մեթոդ եվլուցիայի ուսումնասկրության: Յերկրաբանական հեռավոր ժամանակների կենդանական ձևերի կազմությունների պարզությունը և նրանց աստիճանական բարդացումը: Ժամանակակից ձիու նախնիների ձևերի հնեաբանական շարքերը (Եռհիպոլիտա-պլուս-պլենչիպալուս): Բրածո հավաքական և անցման ձևեր (պլանութերիաներ՝ գետակինձների, ոնդեղջուրների և ձիերի հատկանիշներով, թուչուններից՝ արխելապտերիք):

4. Կենասաշխարհագրական մեթոդ։ Կենդանաբաշխարհական շրջանները։ Նրանց Փառնայի բնույթը։ Կենդանիների աշխարհագրական բաշխման եվլուցիոնական մեկնաբանումը։ Ովկիանոսային և ցամաքային կղզիների կենդանիները։ Փառնայի և Փլուբայի ժամանակակից բաշխումը վորպես արդյունք յերկրի յերկրաբանական փոփոխությունների և որդանիզմների եվլուցիայի։ Բնական անջատման նշանակությունը մեռնող ձևերի պահպանման գործում։

III. ՓՈՓՈԽԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՃԱՌԱՆԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ  
ՅԵՂԱԾ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ՆՐԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
(12 Ժամ)

Փոփոխականությունն ու ժառանդականությունը վորպես  
միենույն պլրոցեսի յերկու կողմերը:

Փոփոխականության տեսակները: Փոփոխականության ձեւ-  
վերը՝ հասակային, սեռային, սեղոնային, բնախոսական: Փոփո-  
խականության կորագիծը: Արտաքին գործոնների ազդեցությու-  
նը անհատական փոփոխականության վրա: Մոդիֆիկացիաների  
ժառանգականության խնդիրը: Տեսական մոդիֆիկացիաների ազ-  
դեցությունը և նրանց ճիշտ մեկնաբանումը: Մուտացիոն փոփո-  
խականություն: Մուտացիաները բնության մեջ և նրանց որինա-  
չափությունները: Արենստարկանորեն մուտացիաներ սուանալը և  
նրանց խոշոր նշանակությունը անասնաբուծության և բուսա-  
բուծության պլրակտիկայում: Մուտացիաների նշանակությունը  
և վարուցիայի պլրոցեսում: Ուղղության բացակայությունը մու-  
տացիոն պլրոցեսում:

Մուտացիան-որդանիզմի ժառանդական բնույթի փոփոխու-  
թյունն է:

Ժառանդականության որինաչափությունների հայտնաղոր-  
ծումը: Մենդելի՝ սիսեռի վրա կատարած փորձերը: Մենդելիզ-  
մը և քրոմոզոմային տեսությունը: Հասկացողություն դամետ-  
ների մասին: Գամետների մաքրության հիմունքը: Ժառանդան  
որինաչափությունների բացատրությունը քրոմոզոմային տեսու-  
թյամբ: Համոզիգոստ և հետերոզիգոստ ձևեր:

Մենդելի յերեք հիմնական կանոնները— հատկանիշների  
արեապետումը կամ գերակշռումը, ճեղքումը, անկախությունը:  
Միջակա ձևի ժառանգումը: Մոնոհիբրիդ և դիչիբրիդ զուգավո-  
րում: Հասկացողություն գեների շղթայանքի և նրանց լոկալի-  
զացիայի մասին քրոմոզոմների մեջ:

Հասկացողություն սեռի քրոմոզոմների մասին: Սեռի վո-  
րոշման խնդիրը: Մեռի հետ կապված հատկանիշների ժառան-  
գումը: Ժառանդականությունը մարդու մոտ:

Գենետիկան վորպես ժամանակակից ուսմունք ժառանդակա-

Նության մասին։ Հասկացողություն Փենոտիպի և գենոտիպի մասին։ Հասկացողություն մաքուր գծերի մասին։ Մաքուր գը-ծերի նշանակությունը անասնաբուծության և բուսաբուծության պրակտիկայում։ Գենետիկան վորպես սելեկցիայի տեսական հիմունք։ Խորհրդային սելեկցիոն կայանների նվաճումները ա-նասնաբուծության և բուսաբուծության բնագավառում։ Ընտրու-թյունն ու հիբրիդիբացիան վորպես բուսական և կենդանական նոր ձեեր ստանալու մեթոդներ, ժամանակակից գենետիկայի դրույթների սխալականությունը և այլն։ Գենետիկայի և սելեկ-ցիայի գերը եվոլյուցիոն պլրոցեսի հիմնավորման գործում։ Փո-գուխականությունն ու ժառանգականությունը վորպես եվոլու-ցիոն պրոցեսի հիմնական նախադրյալներ։

#### IV. ԵՎՈԼՈՒՑԻՈՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ. ԵՎՈԼՈՒ- ՑԻՈՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԲԻՈԼՈԳԻԱՅԻ ՄԵջ ՄԻՆՉԵՎ ԴԱՐՎԻՆ (6 Ժամ)

Կենդան բնության անփոփոխության մասին յեղած կրոնա-  
կան-դոգմատիկական ոլատկերացումների արտացոլումը բիոլո-  
գիայի մեջ։

Կ. Լիննեյը և նրա «Բնության սիստեմը»։ Ժ. Կյուվիեն և  
նրա ուսմունքը կենդանիների կազմության չորս պլանների մա-  
սին, տեսակների կայունության մասին և այլն։ Կյուվիեյի և  
Որբինյի կատաստրոֆների տեսությունը՝ վորպես քողարկումն  
տերսերականության և աշխարհի աստվածային ստեղծագործու-  
թյան հավատքի։ Զ. Դարվինի նախորդները՝ Ժ. Լամարք և  
Եսթեն Ժ. Ստ. Իլեր։ Լամարքի ուսմունքի հիմնական դրույթ-  
ները։ Վիտալիստական և մեխանիստական կողմերը նրա ուս-  
մունքի մեջ (ձգտումն աստիճանականության (գրադացիայի),  
ձեռքբերովի հատկանիշների ժառանգումը և անհատական ջան-  
քերի դերը)։ Ստ.-Իլերի և Կյուվիեյի վեճը և նրա հետեվանք-  
ները։ Պսիխո—և մեխանոլամարկիստները բուժժուական բիո-  
լոգիայի մեջ։ Մեխանոլամարկիստների վնասակար գերը անաս-  
նաբուծության և բուսաբուծության պրակտիկայում։ Անկարե-  
լիությունը, եվոլյուցիան լոկ միայն փոփոխականության վե-  
րածելը թեկուղ և ժառանգական։

Վ. ԴԱՐՎԻՆԻ ՅԵՎ. ՆՐԱ ՈՒՍՄՈՒՆՔԸ (10 Ժամ)

Դարվինի կենսագրությունը : Զ. Դարվինի աշխատությունների յերեան դալը պայմանավորող պատմական և սոցիալ-սուսական նախադրյալները : Դարվինը վորպես 19-րդ դարի կիսու անդիմական արդյունաբերող բուրժուազիայի գաղափարախոսության արտահայտիչը :

Դարվինիզմի հիմունքները : Դարվինի ժամանակաշրջանի գյուղատնտեսության պրակտիկայի մեթոդներն ու նվաճումները վորպես «Տեսակների ծագման» գլխավոր հենակետներից մեկը :

Արհեստական ընտրությունը և նրա նշանակությունը տեսակների ծագման խնդրի լուծման գործում : Որդանիզմների բաղմացման պրոդրեսիան և կենդան երակների մասսայական վոչնչացումը : Գոյության կույրը, առավել հարմարվածների վերակեցությունը : Գոյության կույրի տարրեր ձևերը և բնական ընտրությունը :

Փոփոխականությունն ու ժառանգականությունը վորպես հվագուցիայի հիմնական գործոններ : Արհեստական ընտրության եյական տարրերությունը բնական ընտրությունից : Արհեստական ընտրությունը և ընտանի կենդանիների ու կուլտուրական բույսերի ծագումը :

Հատկանիշների հեռացման սկզբունքը վորպես արդյունք բնական ընտրության և միջակա ձևերի մահացումը : Դիվերգենցիայի գաղափարը բուսական և կենդանական աշխարհում և այսպես կոչված «եվլուցիոն ծառերը» :

Եվլուցիան և հարմարման յերեսությունը : Կենդանիների և բույսերի պաշտպանողական հարմարանքները, վորպես արդյունք գոյության կովի : Որդանիզմների գոյության տարրեր պայմաններին տիպական հարմարման որինակներ՝ պաշտպանողական և նախադրուշական գունավորում, միմիկրիայի «սպառնալից» շարժում, «մահացման» ոեֆլեքս, պահպանական նմանություն և այլն :

Մաղիկների և փոշոտում կատարող միջատների փոխարժարմարվածությունը : «Նպատակահարմարությունը» և Դարվինի նրան տված մատերիալիստական բացատրությունը վորպես ու-

ժեղադույն փաստարկում նրա կըոնական-մետաֆիզիկական մեկ-  
նաբանման և կենդան բնության մասին յեղած վիտալիստական  
հայցքների դեմ։ Սիմբիոզն ու պարագիտիզմը բնական ընտրու-  
թյան տեսության լուսաբանությամբ։ Նպատակահարմարության  
հարաբերական բնույթն որդանիզմների կազմության մեջ և նրա  
իր հակազդությանն անցնելը՝ Փիզիկա-քիմիական և բիոլոգիա-  
կան պայմանների փոփոխության ժամանակ։ Ամենաբարձր կազ-  
մություն ունեցող ձևերի հետ մեկտեղ ամենապրիմիտիվների  
հարատեման պայմանները և նեղ մասնավորված ձևերի մահա-  
ցումը։ Նոր տեսակների առաջացումը վորպես արդյունք միջակա  
ձևերի մահացման՝ փոփոխականության և հատկանիշների հե-  
ռացման առկայության ժամանակ։

Դարվինիզմի բուրժուական սահմանափակությունը և Դար-  
վինի ուսմունքի մետաֆիզիկական կողմերի (գոյության կոփեր  
վորպես բնության ընդհանրական որենք) քննադատությունը  
Մարքսի և Ենդելսի կողմէց։ «Թուիչքի» պլրոբլեմը եվոլուցիոն  
ուսմունքի մեջ և նրա բացակայությունը Դարվինի տեսության  
մեջ։ Պայքարը դարվինիզմի դեմ և նրա դասակարգային եյու-  
թյունը բուրժուական յերկրներում և նեղ մոտ Ռուսաստանում  
19-րդ դարի 60-80-ական թվականներին։

Դարվինիզմի ոգտագործումը բուրժուական գիտության կող-  
մից՝ հիմնավորելու դասակարգային, ցեղային և ազգային ճշն-  
շումների որինականությունը։

Սոցիալական դարվինիզմը և նրա դասակարգային հիմուն-  
քը։ Որպանական աշխարհում տեղի ունեցող եվոլուցիայի դար-  
վինյան բիոլոգիական որենքները սոցիալական յերեվույթների  
վրա փոխադրելու յետադիմականությունը։ Մարքսիզմը դարվի-  
նիզմի հետ նույնացնելու գրույթների անթույլատրելիությունը։

Դարվինիզմի դնահատականը Մարքսի, Ենդելսի և Լենինի  
կողմից։ Լենինը՝ վողջ գոյություն ունեցողի զարգացման մե-  
կնանիստական և դիալեկտիկ-մատերիալիստական կոնցեպցիայի  
խանիստական և անդհատի (թուիչքների) և անընդհատի պլրոբլեմը եվ-  
ճամասին։ Ընդհատի (թուիչքների) և անընդհատի պլրոբլեմը եվ-  
ճամասին պլրոցեսում։ Տեսակն ու փոփոխակը Դարվինի ըմբռնու-  
թուցիոն պլրոցեսում։

Մարդու ծագումը վորպես սոցիալական պլորբեմ։ Որդանական աշխարհի և մարդկային հասարակության եվոլուցիայի ուրենքների վորակական տարբերությունը։

Մարդու ծագումը կենդանական ստորին ձևերից։ Համեմատական-անատոմիական, համեմատական-բնախռական (արյուն) և սպղմաբանական և հոգեբանական տվյալները։

Մարդու և պրիմատների նմանությունն ու վորակական տարբերությունը։ Մարդու համեմատությամբ՝ մարդակերպ կապիկների գանգի, վողնաշարի, առաջին և յետին վերջալորությունների և այլն կազմության առանձնահատկությունները։

«Մարդկային կյանքի՝ հազարավոր տարիների աշխատանքից չնորհիվ կատարելագործված ձեռքի» և «մարդուն նույնիսկ ամենից նման կապիկի անզարդացած ձեռքի» (Ենդելս) միջև յեղած վորակական տարբերությունը։ «Կապիկներից մարդու փոխարկման վճռական քայլը և՝ կապիկների մարմնի ուղղաձիգ դիրքի անցման ժամանակ»։ «Առաջին վերջալորությունների ազատությունը վորպես արդյունք մարմնի ուղղաձիգ դրության անցման՝ հնարավորություն տվեց մարդու նախնիներին գործիքներ արտադրել» (Ենդելս)։ Լեզվի ծագումը վորպես արդյունք մարդու աշխատանքային գործունեյության հասարակական ձևերի։ Մարդու լեզուն ու մտածողությունը և նրանց եվոլուցիան աշխատանքի պրոցեսում։ «Ձեռքի, լեզվի որդանների և ուղեղի միտտեղ աշխատանքը մարդու նախնիների հասարակական կյանքի պայմաններում, վորպես աշխատանքային բարդ ուղերացիաներ կատարելու, մեծ նպատակներ զնելու, և նրանց հասնելու համար ընդունակություն ձեռք բերելու պատճառ։

Բրածո մարդը և նրա առնչությունը ժամանակակից մարդուն։ Պիտեկանթրոպուսը, վորպես մարմնի ուղղաձիգ դիրքին անցած մի ցեղ։ Սինանթրոպը վորպես մարդացման հետագա աստիճան։ Հայդելբերդյան ցեղը։ Նեանդերթալյան ցեղը։ Նախամարդու տեխնիկան, նրա առաջացումը, զարգացումը և ազդեցությունը մարդու եվոլուցիայի վրա։

Կրոմանյոնյան ցեղը վորպես ժամանակակից «բնական մար-

դու» բրածո ձեւը։ Կրոմանյոնյան ցեղի կուլտուրան։ Մարդու հայրենիքի հարցը և նրա Փիլոդենիայի վիճելի մամենոները։ Մարդու ծագման պոլֆիլետիկ պատկերացումների ողտագործումը կրոնական-դասակարգային և ազգային նպաստակներով։ Դարվինի հայացքները մարդու ծագման վերաբերմամբ, վորապես արդյունք իդեալիստական աշխարհայացքի արտացոլման նրանց մեջ և աշխատանքի դերի անդիտացման։ Բուրժուազիայի և յեկեղեցու պայքարը մարդու ծագման խնդրի դիտական լուսաբանման դեմ։

### VI. ԿՅԱՆՔԻ ԾԱԳՈՒՄԸ ՅԵՐԿՐԻ ՎՐԱ (4 ժամ)

Կյանքի ծագումը եվոլյուցիայի կարևորակույն թեման է։ Նրա հակակրոնական նշանակությունը։ Համառոտ ակնարկ հարցի դրվագքի պատմության։ Պանսպերմիայի հիսութեղը, նրա վիտալիստական եյությունը և սնանկությունը։ Կենդանիի և անկենդանի միջև բացարձակ սահման դնելու ձգտումը վորապես տերտերականության պաշտպանություն դիտության մեջ։ Կյանքի ծագման մեխանիստական հիսութեղը։ Ինքնածնության մասին յեղած հայացքների դարձացման պատմությունը։ Պաստյորի բակտերիաների վրա կատարած փորձերի ունեցած նշանակությունը հարցի գիտական դրվագքի մեջ և պրակտիկ կյանքում։ Պաստյորի փորձերի լայնորեն մեկնաբանման անթույլատրելիությունը։ Ինքնածնության տեսության հիմնական դրույթները զիալեկտիկական մատերիալիզմի տեսակետից։ Կյանքի սպեցիֆիկությունը։ Պարզ որդանիզմների յերևան գալլ վորապես նոր վորակի առաջացում մատերիայի եվոլյուցիայի մեջ։ Սկզբնական որդանիզմների ձևաբանական և բնախոսական բնույթի սպեցիֆիկությունը։

Այժմյան որդանիզմները վորակ արդյունք որդանական ձեվերի զարգացման պատմական յերկարատև պրոցեսի։ Սկզբնական որդանիզմների և արժման պարզագույնների նույնացման անձատությունը։ Կյանքի ծագման վիտալիստական և մեխանիստական հարցագրման դեմ պայքարի անհամարժեշտությունը։ Կյանքը՝ մատերիայի պատմական զարգացման և նրա նոր վորակի

արդյունքն է: Մահը վորպես կյանքի և յական մոմենտ: Կյանքն ու մահը վորպես հակասությունների միասնություն:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսանողների համար

1. *Տիմիրյաղել, Զարլզ Դարվինը և նրա ուսմունքը.* Պետական գրախանություն, 1928 թ.
2. Сборник „Происхождение животных и растений“. Под ред. Зернова. Гиз, 1928 г.
3. Вишневский, Происхожд. и древность человека. 1929 г.
4. Ենգելս, Սցիատանքի գերը կապկի մարդացման պրոցեսում, (զետեղված և Ենգելսի «Բնության դիալեկտիկան» գրքի մեջ, Հայկուսհրատականություն, 1930 թ., Պետական գրախանություն):
5. Сборник под ред. Валесколи и Токина „Учение Дарвина и Марксизм—Ленинизм“, изд. 1932 г. (к 50-летию со дня смерти Дарвина).
6. Цузмер, Эволюционное учение. Гиз. 1931 г. (վոչ բռնությունները):
7. Բելյայել. Եվոլուցիոն ուսմունք, 1936 թ., Պետական գրախանությունների գԱՄԱՐ

1. Լենին.— Մատերիալիզմ և Եմիպերիոկրիտիզմ, Հայկուսհրատականություն:
2. Ենգելս.— Անտի-Դյուրինգ, Հայկուսհրատականություն:
3. Ենգելս.— Լյուդվիկ Ֆոյերբախ, Հայկուսհրատականություն:
4. Ենգելս.— Բնության դիալեկտիկան, Հայկուսհրատականություն:
5. Դարվին.— Տեսակների ծագումը. Պետական գրախանություն, 1937 թ.:
6. Уоллес<sup>1)</sup>, Дарвинизм, изд. 1898 г.
7. Козо—Полянский<sup>1)</sup>, Введение в Дарвинизм.
8. Сборник<sup>1)</sup>, „Маркс, Энгельс, Ленин о биологии“ 1933 թ.
9. Северцов<sup>1)</sup>, Этюды по теории эволюции. Гиз. 1923 թ.
10. Синнет и Ден<sup>1)</sup>, Курс генетики, Медгиз, 1931 թ.
11. Филиппченко<sup>1)</sup>, Генетика, Гиз. 1931

12. *Дарвин*<sup>1)</sup>, Происхождение человека и половой подбор (со статьей Мензбира) Гиз.
13. *Шипк*<sup>1)</sup>, Расовая проблема и Марксизм, 1930.
14. *Опарин*, Происхождение жизни.
15. *Азимов*, Происхождение жизни.
16. *Булаев*<sup>1)</sup> К вопросу об исторических предпосылках Дарванизма.
17. *Филопченко*<sup>1)</sup> Эволюционные идеи в биологии.
18. Журнал „Природа“ за 1932 г. №№ 6—7. 11—12.
19. *Гремяцкий*, К проблеме расовых различий („Естествознании и Марксизм,“ 1929 г. № 2).
20. *Завадовский*<sup>1)</sup>. Динамика развития. 23. *Шелл*, Общая биология.
21. *Некрасов*, Борьба за Дарванизм. Гиз.
22. Յուլիայան, Եվրոպի տեսություններ. 1933 թ.

1) Նշանակած գրքերն անհրաժեշտ են նկատված ծանոթության համար:

# ՄԱՐԴՈՒ ԱՆՑՏՈՄԻԱՆ ՅԵՎ ՖԻԶԻՈԼՈԳԻԱՆ\*

ԲԱՅԱՏՐԱԿԱՆ

Անատոմիայի և Փիզիոլոգիայի դասավանդումը նպատակ  
ունի՝

- 1) Տալ փաստական և տեսական կռնկրեա գիտելիքներ անա-  
տոմիայի և Փիզիոլոգիայի բնադրավառից :
- 2) Տալ մեթոդոլոգիորեն ճիշտ ըմբռնում որգանիզմի մեջ  
կատարվող պրոցեսների մասին :

3) Շաղկապել ստանալիք գիտելիքները աշխատանքի կազմա-  
կերպման և արտադրողականության բարձրացման պրոբլեմների  
հետ՝ դպրոցական և արտադրական պայմաններում :

4) Դասընթացի նյութի յուրացման միջոցով նպաստել խե-  
լացի մոտեցում ունենալու մանկավարժության, դպրոցական ա-  
ռողջապահության, Փիզիոլոգուրայի և այլն զանազան հարցե-  
րին:

Դասընթացի նյութն ընդհանուր առմանը համապատասխա-  
նում և միջնակարգ դպրոցի ուսման ութերթու տարվան։ Այդ  
ծրագրից աննշան չեղումները բացատրվում են այն հանդամանքի  
հաշվառմամբ, վոր սովորողները տարրական դպրոցի ապագա  
մանկավարժներ են լինելու։

Ներածական զրույցին յերկու ժամից ավելի չպիտի հատկաց-  
նել, ըստ վորում հիմնական ուշադրությունը պետք է դարձնել  
հատվածի յերկրորդ պարբերության բովանդակությանը, այն  
ինչ առաջին պարբերության բովանդակության բացատրությունը  
քեզ ժամանակ պետք է կլի։

«Բջիջ և հյուսվածքներ» հատվածին հատկացված վեց ժամը  
հնարավորություն և տալիս ուսանողներին ծանոթանալու նյու-

\* ) Ռուսերենից թարգմանել և հայերեն թարգմանությունը  
խմբագրել ե պրոֆ. Ավ. Տեր-Պողոսյանը։

թի հետ նաև գործնականորեն (որինակ՝ դիտել մեկրոսկոպի տակ՝ այս կամ այն հյուսվածքը)։ Հատվածի յեղբափակող կետը բնական անցումն և հանդիսանում հաջորդ հատվածին։ «Արյան շըրջանառություն» հատվածում կարելի յէ հիշատակել մեկուսացված որդանների մասին՝ թեկուղ և սրտի աշխատանքի ուսումնասիրության կապակցությունը (հասկացողություն սրտի աշխատանքի ավտոնոմության մասին)։

«Ծնչառություն»— (3 ժամ) հատվածում վերջին պարբերությունը կարող ե իրեն նյութ ծառայել միայն շատ կարճ յեղբափակող զրույցի համար։

«Մննդառություն»— (8 ժամ) հատվածում հատուկ ուշադրություն դարձնել այն մոմենտների վրա, վորոնք մեծ մասամբ բավականաչափ չեն ըմբռնվում սովորողների կողմից, այսինքն՝ «այրումը», թթվաւմը մարսողության խողովակում չի կատարվում և ստամոքար չի կարելի համեմատել մեքենայի ջերմացման հետ։ պետք ե տալ ֆիզիոլոգիական ճիշտ պատկերացում ներծծման մասին։ զանազան աշխատանքների ժամանակ տեղի ունեցող եներգետիկական ծախսումների հարցը չի կարելի կապել վոչ աշխատանքի զնահատության և վոչ ել հողնեցնողության հետ, և այստեղ պետք ե կրկնակի հոգ տանել նյութի ճիշտ լուսաբանման մասին։ Շրջանառության, չնչառության և սննդառության որդանների գործունեյության ծանոթությունը հնարավորություն և տալիս ավելի խորը մոտենալու մկանային գործունեյության հարցերին, ահա թե ինչո՞ւ «Վուկրամկանային սիստեմ» հատվածը դրված ե վերոհիշյալ հատվածներից հետո։ Մկանային աշխատանքի քիմիզմի մասին կետը պետք ե սովորողներին բերի այն պարզ պատկերացմանը, թե մկանային աշխատանքը ֆիզիոլոգիական պրոցես և թե չի կարելի այն համեմատել մեքենայի աշխատանքի հետ։ Կարեռը և նշել, վոր մկանային գործունեյության հիմքում ընկած են վոչ թե թթվեցնող պրոցեսներ, այլ նյութերի փոխանակման մի շարք բարդ պրոցեսներ։

«Արտաթորման պրոցեսները»— (2 ժամ) շատ կարճ հատվածին հետեւմ ե դասընթացի կենտրոնական հատվածը՝ «Նյարդին հետեւմ կամ թարոնական հատվածը» (14 ժամ)։ Այս հատվածը կենտրոնական և հանգային սիստեմը»

պիսանում այն պատճառով, վոր ապագա մանկալարժներին նյարդային սիստեմի դիտությունը շատ անհրաժեշտ է: Այս հատվածը պետք է ոժանդակի դիտակցաբար կառուցելու մանկավարժական պրոցեսը զպրոցում և հմտորեն պահպանելու կարգապահությունը գասարանում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով ժամերի քանակը և սովորողների ընդհանուր պատրաստության աստիճանը, այս հատվածը 1933 թ. ծրագրի հետ համեմատած՝ բավականաչափ պարզեցված է:

«Ներքին սեկրետիա» հատվածին հատկացված է 4 ժամ:

Հետեւալ հատվածը՝ «Նյութերի փոխանակությունը մարդկային օրգանիզմում» հնարավորություն և տալիս հանրագումարի քերել նյութերի փոխանակման հարցերին վերաբերյալ կուտակված ցրիվ նյութը: Կոպիտ սիսալ և հանդիսանում այն պատկերացումը, թե նյութերի փոխանակությունը վոչ այլ ինչ է, յեթե վոչ չնչառություն, չըջանառություն, աննդառություն և արտաթրություն՝ միասին վերցրած: Նյութերի փոխանակության տակ պետք է հասկանալ ասիմիլատորական և դիսմիլատորական կարգի պրոցեսների այն վողջ ամբողջությունը, վորոնք կատարվում են մեր օրգանիզմի յուրաքանչյուր բջջի, յուրաքանչյուր հյուսվածքի, յուրաքանչյուր որդանի մեջ: Նյութերի փոխանակության պրոցեսների համար նյարդային սիստեմի և ներքին սեկրետիայի գեղձերի գործունեյությունը պակաս կարեւոր նշանակություն չունեն, քան արյան չըջանառությունը, չնչառությունը և աննդառությունը: Ահա թե ինչու համար այդ հատվածը պետք է գնել դասընթացի վոչ թե միջում, այլ սկզբում կամ թե վերջում՝ մարմնի բոլոր օրգաններն անցնելուց հետո:

«Անող օրգանիզմի ֆիզիոլոգիան» հատվածը (4 ժամ) վոչ միայն ընդհանուր պատկերացում պիտի տա մարդու սաղմային և արտարգանգային զարդացման մասին, այլև զուգընթացաբար հանրագումարի քերի այն ցան ու ցրիվ նյութը, վոր վերաբերում և մանկական, առավելապես դպրոցական հասակի անատոմիական-ֆիզիոլոգիական առանձնահատկություններին:

Յեղրափակող հատվածում (4 ժամ) աշխատանքի կազմակերպման և ռացիոնալացման հետ կապված հատվածը պետք է առաջ վայրին ընդհանուր ձևով, այլև դաստիարակչական-

մանկավարժական այն խնդիրների համեմատ, վոր կանգնած էն դպրոցի առաջ:

Ժամերի խիստ սահմանափակ թիվը հարկադրում և հատուկ ուշադրությամբ վերաբերվել մատուցվող նյութի թե ծավալին և թե բնույթին: Անհրաժեշտ համարելով դասավանդումը տանել ըստ մարզս-լենինյան մոթողոլոգիական պարզութու գրույթների, սակայն վոչ մի գեղքում այն չպետք և վերածել մերկ մեթոդութիւնականության: Նյութի ճշգրիտ լուսաբանումը նախ և առաջ վնասակար պարզացումներից խուսափելն է: Այսպես որինակ, խոսելով յերիկամների աշխատանքի մասին, պետք և խուսափել յերիկամները քամիչների հետ համեմատելուց, պետք և մատունանչել, վոր մեղի դոյացումը նախ և առաջ յերիկամային հյուսվածքի ակտիվ գործունեյության արդյունքն է հանդիսանում ձիշտ այնպես, ինչպես թքի զատումը թքագեղձի հյուսվածքի գործունեյության արդյունքն է: Բարձրագույն ներվային գործունեյության ուսումնասիրության ժամանակ դարձյալ պետք և պարզորեն ուրվագույն պայմանական ուժիկեքնելի գերը՝ աշխատանքային և կենցաղային ունակությունների մշակման գործում, ցույց տալով, վոր բանն այսուեղ միայն պայմանական ուժիկեքների մեջ չե, վոր վոչ թե պայմանական ուժիկեքները, այլ գետակցությունն և վարոշում մարդու վարքը:

Ինքնին հասկանալի յե, վոր այս բոլոր գեղքերում պետք և խոսել այն մասին, թե ուր և տանում մեղ սխալ (մեխանիստական կամ վիտալիստական) գրույթը՝ յուրաքանչյուր տվյալ յերեվույթի մոտեցման ժամանակ:

Ծրագրում գիտմամբ մոթողոլոգիական մամենտները գրված են դասընթացի հենց բովանդակության մեջ, նյութի ընարության մեջ, նրա դասավորության մեջ և վոչ թե մեծախոսությունների ձևով, վորպեսզի մանկավարժը չգայթակղի ու չահագությունների միայն ցուցանակներով և դրանով ել հանդստանա:

Դասավանդման ժամանակ լայնորեն ողտվելով վորձերի պրեպարատների, մուլյաժների, մողելների, տախտակների և այլն ցուցադրումներով, չպետք և տարվել սակայն գործնական ինքնուրույն աշխատանքների մեջ քանակով, վորովհետեւ դրա

Համար ժամանակ չկար: Կունելի յէ տալ սովորողներին առավելապես այնպիսի գործնական աշխատանքներ, վորոնք կարող են նրա համար ոգտակար լինել ապագա աշխատանքների ժամանակ տարբարական դպրոցում: Որինակ 1. «Բջիջ» հատվածի ուսումնասիրության ժամանակ պետք է միկրոսկոպիական աշխատանք դնել՝ կենդանի հյուսվածքներ դիտելու համար. 2. «Արյան շրջանառություն» հատվածում լաբորատորական աշխատանք պետք է կատարել՝ «Արյան շարժումը գորակի թաթի մեջ»: 3. «Շնչառություն» հատվածում փորձ պետք է անել սպիրոմետրով և արտաշնչած դաղերի անալիզ կատարել. 4. «Մննդառություն» հատվածում գործնական աշխատանք դնել՝ «Պահալինի աղղեցությունն ու լայի վրա»: 5. «Վոսկրամկանային սիստեմ» հատվածում անցկացնել գործնական պարապմունքներ կմախքի վերաբերյալ և այլ աշխատանքներ:

## ԾՐԱԳԻՐ (60 ԺԱՄ)

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (1 Ժամ)

Մարդու անառողիան և ֆիզիոլոգիան վրապես գիտություն, վորոն ուսումնասիրում և մարդկային օրգանիզմի կազմությունն ու գործունելությունը: Մարմնի կազմության ուսումնասիրության նշանակությունը կենսական գործառնություններն ըմբռներու համար: Ֆիզիոլոգիայի՝ վրապես գիտության՝ գործնական (աղբակտիկ) ակունքները: Եկապերիմենտն ու գիտողությունը վրապես Փիզիոլոգիայի ուսումնասիրության հիմնական մեթոդներ: Անառողիայի և ֆիզիոլոգիայի նշանակությունը պոլիտեխնիկիկ դպրոցի մանկավարժի համար:

Մարդու և կենդանիների նմանությունն ու տարբերությունը: Գործիքների արտադրությունն ու գործադրությունը, վրապես մարդու տարբերիչ դիճ: Աշխատանքը մարդկային կյանքի հիմք: Աշխատանքի ազդեցությունը որդանիզմի վրա:

### Բջիջ և հյուսվածքներ (5 Ժամ)

Համառոտ տվյալներ բջիջային ռւսմունքի զարգացման պատճության մասին: Բջջի կազմությունը: Կորիզի և պրոտոպլազ-

մայի գերը բջջի մեջ։ Բջիջների բաժանումը։ Կարիսկինեղ։

Կենդանական հիմնական հյուսվածքները (Եպիթելային, շարակցական, (կոճիկային, վուկրային), մկանային, նյարդային)։ Արյունն ու ալիքը վորսկես միջավայր բջիջների ու հյուսվածքների համար։

### Արյան շրջանառություն (6 ժամ)

Արյան շրջանառության նշանակությունը։ Արյան բաղադրությունը։ Արյան մարմնիկները և նրանց նշանակությունը։ Պլազման, նրա բաղադրությունն ու հատկությունները։ Արյան մակարդման նշանակությունը։ Արյան պաշտպանողական հատկությունները։ Հասկացողությունն իմմունիտետի մասին։

Արյան և ավիչի շրջանառության ընդհանուր սքեմ։ Զարկերակներ և յերակներ։ Մաղանոթների նշանակությունը։ Ավչի գոյացումը։ Սրտի կազմությունը։ Սրտի աշխատանքը և որդանների արյունով լցվելը որդանիզմի հանդստի և տարբեր գործունեյության ժամանակ։ Սրտի և անոթների աշխատանքի կանոնավորումը։ Սրտի մարդանքի նշանակությունը։ Սրտի գերհողնությունը և նրա կանխամտան միջոցները։

### Շնչառություն (3 ժամ)

Շնչառության որդանների կազմությունը։ Շնչառության որդանների կազմության այն ստանձնահատկությունները, վրոնք սառն ողը, փոշին, միկրոբները՝ թոքերն ընդունելու դեմ՝ որդանիզմի նախապահպանման համար նշանակություն ունեն։ Շնչառական շարժումների մեխանիզմը։ Արհեստական շնչառություն։ Գաղերի փոխանակումը հյուսվածքների մեջ։ Շնչառության որդանների աշխատանքը՝ որդանիզմի տարբեր գործունեյության ժամանակ։ Հասկացողություն թոքերի կենսական տարրության մասին։ Շնչառության կանոնավորումը։

Առողջ ողը վորսկես արդյունավետ աղտադրական աշխատանքի պայմաններից մեկը։ Թունավորում շնչառական որդանների միջոցով։ Մաղմական թունավորող նյութեր։

Սննդառության նշանակությունը: Սնունդը վորպես եներդիայի աղբյուր, վորպես որդանիզմի շինանյութ: Մարսողության դերը: Մարսողության որդանների կազմության ընդհանուր պլանը: Մարզու և այլ կաթնասունների մաքսազության որդանների կազմության առանձնահատկությունները՝ կապված սննդառության բնույթի հետ: Մարսողական գեղձեր: Մարսողական ուղղութերմենատները: Սննդի առաջխաղացումը և նրա փոփոխությունները մարսողական ուղղութաբերում: Հասկացաղություններին և մարզու մարսողական գեղձերի աշխատանքի ուսումնասիրության մեթոդների մասին:

Նյարդային և հումորալ մեխանիզմների նշանակությունը մարսողական ուղղութաբերման մեջ:

Սննդարար նյութերի ծծումը: Ծծված նյութերի հետապա վիճակը: Լյարդը և նրա դերը որդանիզմի մեջ: Սննդամթերքների հիմնական խմբերը, նրանց բաղադրությունը, սննդարար արժեքը: Վիտամինները և նրանց նշանակությունը: Հասկացողություն սննման նորմաների մասին: Մարդկային որդանիզմի եներդիայի որական ծախսը: Մտավոր և Փիզիկական աշխատանքի ժամանակ ծախսված եներգիան: Մնման վորպակական կողմի հարցը: Անող որդանիզմի սննդառությունը:

Սննդանյութերի տեխնիքական և խոհարարական մշակման նշանակությունը: Սննդառության առողջապահության փիզիոդիմուկական հիմունքները: Հանրային սննդներ սննման առողջացման և ուսցիչության առողջացման աւղին և:

### Վոսկրա-մկանային սիստեմ (7 ժամ)

Վոսկրա-մկանային սիստեմը վորպես մարդու բանող ապարատ: Վոսկրների բաղադրությունն ու կազմությունը: Կմախքի կազմությունը: Մարդու կմախքի կազմության մեջ յեղած առանձնահատկությունները՝ մարմնի ուղղաձիգ դիրքի կապակցությամբ: Վոսկրների շարժուն և անշարժ միացումները: Մըկանների ամբակցումը վոսկրներին: Վոսկրների միացումը կոտըրմէլուց հետո:

Մկանների կազմությունը։ Կծկունակությունը վորաբես մը կանների հիմնական հատկություն։ Հասկացողություն մկանային աշխատանքի քիմիկական մասին։ Մկանի հոդնությունը։ Ոլիթմի և բեռնալորման նշանակությունը մկանների աշխատանքի ժամանակ։ Մկանների նորմալ գործունեյության պայմանները (թթվածնի, սննդանյութերի մատակարարում, քայլայման արդյունքների հեռացում)։ Աշխատանքի ժամանակ մարմնի հարկադրական գիրքի ազդեցությունը վոսկրամկանային սիստեմի և ամբողջ օրգանիզմի վրա։ Ֆիզիուլուրա, մարզանք, սպորտ։

### Արտաքորման պլոցեսները (2 ժամ)

Նյութափոխության վերջնական արդյունքները և նրանց արտաքորմանը։ Յերիկամների կազմությունը և մեղի դոյացման պլոցեսը։ Միզահան որգանները։

Մաշկի կազմությունը։ Մաշկը վորաբես արտաքորման և ջերմականոնավորիչ որգան։ Մաշկի միջացով որդանիզմի մէջ թափանցող թույներ։ Մաշկի միջացով ներդործող ուազմական թունավոր նյութեր։

### Նյարդային սիստեմ (14 ժամ)

Նյարդային սիստեմի կազմության ընդհանուր պլանը։ Հասկացողություն նեյրոնի մասին։ Նյարդային հյուսվածքի հառկությունները (գրգուականություն և հաղորդականություն)։ Վաղնուղեղի կազմությունը։ Ուժիւեքսային ուղեղ։ Վողնուղեղային ուեֆլեր։

Գլխի ուղեղը (դանդուղեղ)։ Գլխի ուղեղի կազմության առանձնահատկությունները զանազան վողնաշարավորների մուտքանունների մասին։ Գլխի ուղեղի տարրեր մասերի դերը։ Յերկայնաձիգ ուղեղ, ուղեղ-զի բունն իր ամբողջությամբ, վոքք ուղեղ, մեծ կիսազնղեր)։ Հասկացողություն բարդ ուեֆլեքսների մասին։ Շարժումների կոորդինացիան (համակարգումը)։ Պատկերացում բնազների մուրգինացիան (համակարգումը)։ Պատկերացում բնազների մասին, վորաբես բարդ ուեֆլեքսների հասկացողություն վեղետատիվ նյարդային սիստեմի մասին։

Աւղեղի մեծ կլասպնդերը վորպես բարձրագույն նյարդա-  
յին գործունեյության որդաններ : Պայմանական ռեֆլեքսներ :  
Պայմանական ռեֆլեքսների մշակումը : Պայմանական ռեֆլեքս-  
ների արդելակման յերեվույթները : Պայմանական ռեֆլեքսների  
նշանակությունը կենդանու կյանքում :

Մարդու բարձրագույն նյարդային գործունեյությունը : Պայ-  
մանական ռեֆլեքսների նշանակությունը՝ աշխատանքային ունա-  
կություններ մշակելու գործում : Գիտակցության գերը՝ աշխա-  
տանքային ունակություններ մշակելու գործում : Մտածողու-  
թյունը վորպես մարդու նյարդային գործունեյության բարձրա-  
գույն արտահայտություն : Մարդու գիտակցության սոցիալական  
օլայմանավորվածությունը : Համառոտ տվյալներ բարձրագույն  
նյարդային գործունեյության ուսմունքի պատմությունից :

Յերեխայի բարձրագույն նյարդային գործունեյության զար-  
գացումը : Պայմանական ռեֆլեքտորային գործունեյության ա-  
ռանձնահատկությունները մանկական հասակում : Հասկացողու-  
թյուն բարձրագույն նյարդային գործունեյության տիպերի մու-  
սին :

Զգայարանները և նրանց նշանակությունը : Տեսողության  
սրբաններ : Յանցենին վորպես նյարդային ընդունող ապարատ :  
Լսողության որդան : Կորայան որդանի գերը : Հոտառության,  
ճաշակի, չոշափելիքի որդանները : Հոդա-մկանային զգայու-  
թյուն :

Ներգատուցքներ (ներքին սեկուլյարիա, 4 ժամ)

Որդանների միջև յեղած քիմիական կապը : Հասկացողու-  
թյուն ներզատական գեղձերի մասին : Վահանաձև դեղձ, թիմուս  
(զօնայա յելեզա) ուղեղի հավելվածներ, մակլերիկամներ, սե-  
ռական գեղձեր : Ներզատական գեղձերի հեռացման և պատվաս-  
տի փորձերը կենդանիների մոտ : Մանկական հասակի ներզա-  
տումների առանձնահատկությունները : Ներզատական գեղձերի  
ուսումնասիրության բնագավառում ձեռք բերված նվաճումները  
և նրանց գործնական նշանակությունը անասնաբուժության և  
քժկեռության մեջ :

Նյութերի փոխանակումը մարդկային որգանիզմի մեջ  
(2 ժամ)

Նյութերի փոխանակման ընդհանուր պատկերը որգանիզմի մեջ: Ասիմիլացիան և դիսիմիլացիան վարպես փոխադարձ-հակադիր պրոցեսներ. նրանց միասնությունը՝ նյութերի և եներդիմաների փոխանակման եյությունն և հանդիսանում որգանիզմի մեջ: Ֆերմենտների գերը նյութերի փոխանակման պրոցեսում: Նյութերի ընդհանուր փոխանակման վորոշման հիմնական միջոցները որգանիզմի մեջ: Խանդարմունքը որգանիզմի մեջ՝ կապված նյութերի փոխանակման խանդարման հետ: Նյարդային և հումարալ ներգործությունները նյութերի փոխանակման վրա:

Անող որգանիզմի ֆիզիոլոգիան (4 ժամ)

Մարդու զարդացման գլխավոր չքանները:

Ներարգանդային կյանքը: Սեռական բջիջները: Սաղմի զարգացումը: Մարդու և կենդանիների սաղմի զարդացման առաջին աստիճանների նմանությունը:

Մանկական որգանիզմի զարդացումը: Հասունացման շրջանը: Վոսկրամկանային, սրտա-անոթային, նյարդային սիստեմների հասակային (տարիքային) առանձնահատկությունները: Սնումը մանկական և դեռատի հասակում:

Հասկացողություն յերեխաների և դեռատիների առողջության պահպանման մասին:

Յեզրակացություն (4 ժամ)

Մարդու որգանիզմի մեջ կատարվող պրոցեսների ըմբռնման հաշանակությունը՝ աշխատանքի և կենցաղի կազմակերպման համար: Աշխատանքի կապիտալիստական և սոցիալիստական ռազմակացիան: Հոգնածության յերեվությների բարդությունը: Աշխատանքի եներգետիկական դնահատման և հոգնածությունը որգանիզմի մի վորեւ ֆունկցիայի փոփոխությամբ բարեկարգելու անթույլատրելիությունը: Նյարդային սիստեմի գերը

Հողնածության յերելույթների դարձացման գործում։ Հողնածության պրոբլեմի դրվածքը և պայքարը նրա դեմ բուրժուական յերկրներում և ԽՍՀՄ-ում։

Գիտակցության ազգեցությունը որպանիղմի Փիզիոլոգիական գրության և աշխատունակության վրա։ Հետաքրքրություն դեպի աշխատանքը։ Աշխատանքի իմաստավորված լինելու նշանակությունը։

Աշխատանքային շարժումները։ Որիթմի և բեռնվածության նշանակությունը աշխատանքի մեջ։ Աշխատանքի ճիշտ ձևերի յուրացումը։

Աշխատանքի և հանգստի կանոնավոր հաջորդումը։ Աշխատանքի ընդհատման և դպրոցական հասակի ծանրաբեռնվածության վերացման նշանակությունը։ Աշխատանքի ուժիմի պրոբլեմը։

Շրջապատի պայմանների սանիտարա-առողջապահական նրանակությունը։ Կենցաղի կաղմակերպման կանոնավորության նշանակությունն առողջապահության և աշխատունակության բարձրացման համար։

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հասուկ դասագիրք մանկավարժական ուսումնարանների համար չկա։ Յեղած գրականությունից կարելի յէ հանձնարարել միջնակարգ դպրոցի ուսման ութերորդ տարվա դասադիրը՝ կարանը — Մարդու անատոմիան և Փիզիոլոգիան։ Պետհրատ, Յերեան։

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՍՏԱԽԵՐԻ ՀԱՄԱՐ

- 1) Под ред. Бабского. Физиология человека (учебник для педвузов, ч I, 1934 г. 2) Гебер. Курс физиологии. Госиздат. Москва, 1933 г. 3) Данилевский. Физиология человека.
- 4) Стерлинг. Основы физиологии человека, т. I и II. 5) Павлов. Лекции о работе больших полушарий головного мозга.
- 6) Орбели. Лекции по физиологии нервной системы. 7) Эванс. Современные успехи физиологии.

## ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ\*)

### ԲԱՅԱՏՐԱԿԱՆ

Մանկավարժական ուսումնաբանների բնագիտության մեթոդիկայի նպատակն է՝ սովորեցնել ուսանողներին մեթոդապես ձեռքուժ ավանդել բնագիտության դասերը տարրական գորոշի բարություն դասարաններում, գործադրելով տարրեր մեթոդներ, լաբորատորիա, իլյուստրատիվ և այլն, ինչպես նաև կազմակերպել աշխատանքը կենդանի անկյունում ու գորոշամերձ հողամասում, միաժամանակ տիրապետել խմբակային սպարազմունքների կազմակերպման տեխնիկային:

Նախքան փորձնական մանկավարժական պրակտիկան սկսելը, առաջական դասընթացի պարապմունքներին հարկավոր ե անցնել՝ «Ծրագրի ուսումնասիրությունը» և «Աշխատանքի մեթոդներին առաջադրվող պահանջների առանձնահատկությունը բնագիտության դասերին» թեմաները:

Սրա հետևանքով ուսանողները պետք է գիտենան՝ ա) ինչ նյութ և ինչ սիստեմով ե ուսումնասիրվում տարրական դպրոցի յուրաքանչյուր դասարանում։

բ) ինչ կենդանի նյութ, աղյուսակներ, կունկցիաներ, սպիրացիաներ և այլ ապահովանելու գործիքներ, դասադրքեր, սարքավորում մեթոդական ձեռնարկներ պետք ե ունենա տարրական դպրոց։

գ) Յուրաքանչյուր դասարանի ուսուցման նյութի պլանը թեմաների և դասաժամերի։

\*) Մըագիւրը ոռուսերենից թարգմանել ե Ա. Վարդապետյանը, հայերեն թարգմանությունը խմբագրել ե Ավ. Տեր-Պողոսյանը

դ) Բնագիտության տիպական դասի կառուցվածքի սխեման :  
յե) Ընդհանուր պահանջներ դասը տանելու, եքսկուրսիաներ կատաղելու, կենդանի որյեկաներ, աղյուսակներ և փորձներ ցւցադրելու, լրաբանական աշխատանքներ կիբառելու տեխնիկայի վերաբերյալ :

Այս հարցերի ուսումնասիրությունը պետք է կատարել վոչ միայն լեզցիոն կարգով, անհրաժեշտ է տալ ուսանողներին դորձնական ունակություններ, թե ինչպես պետք է վարդել գործիքների, կենդանի որյեկաների ու գիտողական ուսուցման պարագաների հետ : Տնային աշխատանքների համար հնարավոր է ուսանողներին տալ, որինակ, այսպիսի առաջադրանքներ՝

ա) Դուրս գրել ծրագրի բացատրագրից բնագիտության խնդիրները տարրական դպրոցում :

բ) Դուրս գրել հաջորդական կարգով յուրաքանչյուր դաստիանի ծրագրային հիմնական նյութերն ըստ բաժինների՝ «Անկենդան բնություն», «Բույսեր», «Կենդանիներ», «Մարդ» :

դ) Կազմել յուրաքանչյուր դասարանի համար անհրաժեշտ սարքավորման ցուցակ, ըստ «Անկենդան բնություն», «Բույսեր», «Կենդանիներ», «Մարդ» թեմաների աշխատանքի և հավաքել սարքավորումն այս թեմաներից ամեն մեկի համար :

դ) Ուսումնասիրել 3-րդ և 4-րդ դասարանների դասադրքերի բովանդակությունը և նյութի հաջորդականությունն ու դաստիարել դասադրքերի նյութն ըստ դասերի :

յե) Կազմել առաջին, յերկրորդ, յերրորդ և չորրորդ դասարանների համար վորեե դասի որինակելի ու մանրամասն պլան և ուսանողների առաջ ցույց տալ այդ դասի անցկացման մեթոդիկան :

Բնագիտության մեթոդիկայի տեսական պարագմունքների ընթացքում դասատուն ուսանողներին ծանոթացնում է յուրաքանչյուր դասարանի աշնանային առաջին և դարնանային վերջին թեմաների դասերի անցկացման մեթոդիկային : Սա կարեոր է նրա համար, քանի վոր դիտել այս աշխատանքը դպրոցում և վորպես պրակտիկանո՞ւ այս թեմաներից փորձնական դասեր անցնելացնել ուսանողներին, հարկ չի լինի . իբրև մանկավարժական խոկական աշխատանքն ել նրանք դպրոցում ոկտելու յեն . հենց

այս թեմաներից, իսկ գարնանալին թեմաները հարուստ են նյութերով:

Ծրագրում ըստ այս հատվածի ցույց են տրված նաև դասերի թեմաները յուրաքանչյուր դասարանի համար, վարոնց անցման մեթոդիկան սովորաբար դժվարացնում և վոչ միայն ուսանողներին, այլ և աշխատող մանկավարժներին։ Այսպիսին են ուրինակ 2-րդ դասարանի «Լճակ և գետեր» թեմայի դասերը (տես 2-րդ դասարանի 6, 7, 8, 9 թեմաները), խոշոր քաղաքների դպրոցների մեծամասնության համար նաև կենդանի որյեկտների և տպագրած դիտողական ուսուցման պարագաների ցուցադրական տիպիկ դասերը (տես 2-րդ դասարանի 4-րդ և 5-րդ թեմաները) :

3-րդ և 4-րդ դասարաններում այս նպատակով ել որինակելի դասեր են նշված՝ հետեւյալ թեմաների վերաբերմամբ՝ «ջուր», «սղ», «Ելեկտրական յերեվույթները բնության մեջ», «Մարդու ներքին որդանները», «Եներգերն ու սրանց հատկությունները», «Մկաններն ու սրանց աշխատանքը», քանի վոր այս դասերին՝ 3-րդ դասարաննում՝ անկենդան բնության վերաբերյալ և 2-րդ ու 4-րդ դասարաննում՝ բնական որյեկտների վերաբերյալ փորձերի զեմոնատրացիայի մեթոդիկայի անցկացումը սովորաբար գրժվարանում։ Այս նպատակով տարեսկզբին ուսանողները ներկրավլում են կենդանի անկյուն կազմելու և այնուեղ փորձեր ու գիտողություններ անելու պրակտիկ աշխատանքի մեջ։

Ծրագրում նշված թեմայի տիպական դասի կառուցվածքը և անցկացման մեթոդիկան ուսումնասիրելիս դասատուն պետք է ծանոթացնի ուսանողներին դիտելիքների այն ծավալին ու խորությանը, վորպիսին պետք է տալ տարրական դպրոցի աշակերտությանը աղյուսակայի վերաբերյալ, պետք և ծանոթացնի նաև սարքավորմանը, վորը պետք է ողտագործել սրա համար։ Դասի սարքավորմանը, զարգելի դրման մեթոդիկայի և սարքավորումն ոգտագործելու տեխնիկային։ Դասին ստացված դիտելիքների զնահատման ձևերին, հաշվառման ձևերի և աշակերտության դիտելիքների ձևերին, չաշվառման չափանիշներին։ Սա հնարավորություն կտա ուսումնահատման չափանիշներին։ Այս հնարավորություն կտա ուսումնասիրել մեթոդների վերաբերող հարցերը վոչ թե կտրված, վե-

բացական վիճակում, այլ կապված դասի վորոշակի թեմային կոնկրետ բովանդակության հետ, վորպիսին յուրաքանչյուր գասարանի համար ցույց և տրված այս ծրագրի վերջում: Նախքան անընդհատ մանկավարժական պրակտիկային անցնելը թույլատրելի յէ յուրաքանչյուր դասարանում մեկ անդամ ցանկացող ուսունականներին զեկուցումով հանդես դալ այս կամ այն դասի անցկացման մեթոդիկայի վերաբերյալ, սակայն դարձնել տարրական դպրոցում տիպական դասերի կառուցվածքի և անցկացման մեթոդիկայի ուսումնասիրության սիստեմ՝ չի կարելի: Հիմնականում այս վողջ հատվածի աշխատանքը պետք է տանի ինքը գասատուն: Կենդանի անկյան և դպրոցամերձ տնտեսության մեջ տարվելիք աշխատանքների հարցն անհրաժեշտ և ուսումնասիրել վոչ թե միայն տեսականորեն, այլ և դորձնական աշխատանքների կատարումով: Բոլոր ուսանողները պարտադիր կարդով պետք է կատարեն տարրական դպրոցի յուրաքանչյուր դասարանի համար ծրագրով նշված կենդանի անկյան և դպրոցամերձ տնտեսության աշխատանքներն ուսումնական տարրված համապատասխան սեղոնին:

Կրկնության և հաշվառման դասերի անցկացման, դասի ժամանակ գրի առնելու և նկարելու, ինչպես և տան աշխատանքներին վերաբերող հարցերն անհրաժեշտ և քննության առնել նախքան փորձնական և համատարած պրակտիկան:

Մանկավարժական պրակտիկային զուգահեռ ընթացող տեսական պարապմունքներին անհրաժեշտ և վորպես իշլուստրացիա ոգտագործել դպրոցներում տարվող մանկավարժական պրակտիկայի պրցեսում կուտակված նյութերի գրական ու բացասական ժողովները:

Բնագիտության մեթոդիկայի դասընթացը նորմալ անցկացնելու համար անհրաժեշտ և տարրական դպրոցի համար ձեռքբերել բնագիտական կարինետի սարքավորում, Լուսժողկոմատը 1936 ուսումնական տարվա տիպական ցուցակի համաձայն:

Բնադիտության մեթոդիկայի դասընթացին առաջադրված խնդիրները հաջողությամբ լուծելու համար յուրաքանչյուր տեխնիկումում անհրաժեշտ և ունենալ կենդանի անկյուն: Կենդանի անկյունում պետք է վորպես անհրաժեշտ մինիմում ունենալ կենդանի բնության հետեւյալ որյեկտները՝

1. Զրային բույսեր, գեկորատիվ բույսեր և սենյակի պայմաններում աճող բանջարանոցի ու այլու մի քանի կուլտուրաներ (սոխ, ծաղկաբեր կուլտուրաներ, ճակնդեղի, զաղարի, կազամբի սերմնակալներ, բողկ, սալատ, լոբի, ըակլա, մորի և այլն), վորոնք ցույց են տրված տարրական դպրոցի ծրագրի դյուզատնեսական աշխատանքներին վերաբերող մասում:

2. Գորտեր, մողեսներ, բրառու, կրիա, մանր թռչուններ, հավեր, վողնի, սկյուռ, մկներ, ճաղարներ:

Կենդանի անկյունում աշխատելու համար անհրաժեշտ է ուսանողներին կազմակերպել բնադիտության մեթոդիկայի զասընթացի հենց առաջին որը: Մանկավարժական պրակտիկային անցնելու ժամանակ ուսանողները պետք է կենդանի նյութի հետ վերաբերվելու ունակություններ ունենան:

Տարվա ընթացքում վորսես տնային պարտադիր աշխատանք ուսանողները պետք է կոլլեկցիաներ պատրաստեն վշտաերե ու սաղարթավոր ծառերի և թփերի ամառային, ձմեռային և գարնանային ճյուղերից, տերևներից, ծաղիկներից, պտուղներից ու սերմերից: Դարնանը առաջին ծաղկող բույսերի նմուշներից, բանջարանոցային կուլտուրաների և մոլախոտերի բաղրոջներից, բանջարանոցի վնասատու միջատների կամ թե կուլտուրական բույսերի ամենատարծված վնասատուներից և այլն:

Պատրաստված կոլլեկցիաները դասատվի կողմից ստուգվելուց և գնահատվելուց հետո կարող են մնալ ուսանողների մոտ և տեխնիկումն ավարտելուց ծառայել վորսես տեղեկատու հետադարձում նրա կողմից ոգտագործվել զպրոցում:

Այս դասընթացի համար վորակես հիմնական ձեռնարկներ կարող են լինել՝ Ս. Ա. Պավլովիչ, „Практика преподавания естествознания в начальной школе“ Учпедгиз, 1936 թ. համարակություն և Կ. Պ. յագովսկի „Практические занятия по естествознанию в начальной школе“, Учпедгиз, 1936 թ. Կարող են ոգտագործվել Վ. Փ. Շալաև „Методические указания по обучению естествознанию в начальной школе, Четыре, 1934 թ.“ և Հ. Ա. Գորբունов, „Уроки естествознания в начальной школе (практическое руководство для учителя) 1935 թ. Առաջնակ. հրատ. Սովկաш և „Методический материал для учителя начальной школы“ 1, 2, 3, 4, գանարանների համար

1934/35 թ. առաջին և յերկրորդ կիսամյակների համար: ՀԻԿ  
Պедагогики ՎԿԱ, издав. Наркомпросом РСФСР.

Նշված գրականության մեջ ուսուցչի համար տեղեկատվառ-  
կան բնույթի հանձնարարելի ձեռնարկների ցուցակներ կան:

## Ծ Ր Ա Գ Ի Բ

### I. ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՅԻ ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

(4 ժամ)

1. Բնագիտության խնդիրներն ու նպատակները տարրական-  
դպրոցում.

2. Բնագիտության կայուն ծրագրերի կառուցման սկզբունք-  
ները տարրական դպրոցում.

ա) Բնության և շրջապատող կյանքի յերեվույթների վերա-  
բերյալ պատկերացումների ու հասկացողությունների կուտա-  
կում.

բ) Տարրական, սակայն գիտական սիստեմականություն.

գ) Ուսումնասիրվող հարցերի լուսաբանման հակակրօնական  
բնույթը.

դ) Գիտության լայն ողտագործման մոմենտների ընդգծումը  
սոցիալիստական շինարարության համար.

յե) Ուսումնասիրվելիք նյութերի մատչելիությունը աշա-  
կերտության տարիքին:

զ) Նյութի ուսումնասիրությունը բնագիտության համար  
բնորոշ զանազան մեթոդներով:

3. Նյութի ուսումնասիրության սիստեմն առանձին թեմաների  
սահմաններում ըստ ուսման տարիների:

1-ին դասարան.— Տարվա սեզոնները, յեղանակի փոփոխու-  
թյունները, բույսի, կենդանու և մարդու կյանքում կատարվող  
փոփոխությունները ցայտուն կերպով բնութագրող և սրանց միջև  
պարզագույն կապն ու փոփաղարձ կախումը յերևան հանող որ-  
դանական և անորդանական բնույթյան յերեվույթների կուտակու-  
մը և ուսումնասիրությունը:

2-րդ դասարան. Բույսերի և կենդանիների բիոլոգիական  
առանձնահատկությունների և արտաքին տեսքի ուսումնասիրու-  
թյունն ըստ բնական խմբավորումների, նրանց և մարդու միջև  
գոյություն ունեցող պարզագույն կապի յերևան հանելը:

Յ-րդ դասարան։ Կոնկրետացնել և ճշտել աշակերտների պատկերացումներն անորդանական բնության հիմնական որյականութերի (յերկիրը և նրա հանածոները, ջուրը, ողը, եղեկորականությունը) արտաքին տեսքի, կազմության, հատկությունների և մարդու համար ունեցած նշանակության մասին։

4-րդ դասարան։ Սխտեմի բերել աշակերտների պատկերացումները կենդանիների մասին և ուսումնասիրել նրանց բիոլոգիական առանձնահատկությունները, նրանց բնակության միջավայրի կապակցությամբ։ Մարդու անատոմիայի և ֆիզիոլոգիայի հիմունքների տարրական ուսումնասիրությունը՝ կազմված սանկտարական-առողջապահական պահանջների հետ, վոր արվում են աշակերտների վարքի նկատմամբ՝ դասարանում և տանը։

## II. ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԸ ՑԵՎ ՆԲԱ. ՎՐԱ. ԱՇԽԱՏԵԼՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ (50 ժամ)

1. Տարրական դպրոցի բնագիտության դասերի աշխատանքի մերության առաջադրվող պահանջների առանձնահատկությունները

Բնության ուսումնասիրության մեթոդների ընտրության վրա ազդող բնագիտական սոլեցիֆիկ առանձնահատկությունները։

Առարկայականության և գիտողականության նշանակությունը՝ յերեխաների կողմէց բնագիտական հիմնական հասկացողությունների յուրացման պրոցեսում։ Ուսումնական աշխատանքի կապակցությամբ կատարվող նատուրալիստական աշխատանքի և դպրոցամերձ տնտեսության մեջ տարվող աշխատանքների նշանակությունը։ Աշխատանքի այն հիմնական մեթոդները, վոր առանձնահատուկ են բնությունն ուսումնասիրելու դաշտում համար։ Դա կենդանի որյակաների և փորձի ցուցադրումների հերձուածումը, կինո-դաս, դաս-երակուրսիա, դյուզատնտեսության աշխատանքի դաս, լաբորատոր դաս, դաս՝ տպագիր տպողական պարագաների, բնագիտական կոլեկցիաների ողբեկությունը։

Մեթոդի ընտրության նախադրյալները՝ ուսումնասիրվող մարդությութը բնույթը, բնական շրջապատի պայմանները, տվյալ հար-

Յի պատռմնասիրությանը հատկացված ժամանակը։ Դասագիրքը, նկարներ և դրանցումներ կատարելը բնադիտության դասին յուրաքանչյուր դասարանում։ Տան համար հանձնարարված աշխատանքը և նրա սառուղման մեթոդիկան։

Տարբեր տիպի դասերին ինքնուրույն աշխատանքի ելեմենտերը մտցնելը։

## ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԻ ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գիտենալ կենդանի որյեկտներն ըստ տարրական դպրոցի ծրագրի ու սրանց մասին յեղած դրականությունը։ Գիտենալ արքավորումն ու դասագրքերը։ Լաբորատոր և եքսկուրսիոն կարգի պրակտիկ ունակություններ ունենալ։ Կարողանալ պատրաստել հերթարիում և այլն այնպիսի սւսումնական պիտույքներ ու լաբորատորական սարքավորում, վոր զանազան չկմնարկներ ու կաղմակերպություններն են մատակարարում աժմովա ընթացքում, աշնանային-ձմեռային պարագմունքների համար զանազան դասարանների թեմաների համաձայն։ Գալառագիտական նյութ հավաքելու անհրաժեշտությունը։ Ծանոթություն տարեկան սւսումնական պլանը կաղմելու սկզբունքների հետ։ Ծանոթություն գողրոցում բնության ուսումնասիրության ծրագրերի ու մեթոդների հարցերով դրադիվող մեթոդական հիմնարկների հետ։

## ՈՐԻՆԱԿԵԼԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Այն դասերի, վորոնց անցկացման մերոդիկան ուսանողներն ուսումնասիրում են դպրոցում, տեսական պարագմունքների կարգով։

### 1. ԴԱՍԱՐԱՆ (12 ժամ)

1. Առաջին դաս՝ զրույց «Աշուն» թեմայի վերաբերյալ (1 ժամ)։

2. Դաս՝ Եքսկուրսիա գեղի աշնանային բնությունը (2 ժամ) :

3. Եքսկուրսիայից բերված նյութերի լաբորատոր ուսումնակրությունը (2 ժամ) :

4. Յերեխաների կազմակերպումը բնության վորոխությունները զիտելու համար (1 ժամ) :

5. Դիտողությունների հանրագումարի բերելն ըստ բնության որագրի, վորոշ ժամանակաշրջանի ընդդրկումով (1 ժամ) :

6. Զրույց «Թռչունների չուն» թեմայի վերաբերյալ (1 ժամ) :

7. Զրույց «Ինչպես և մարդը պատրաստվում ձմռան համար» թեմայի վերաբերյալ (1 ժամ) :

8. Առաջին դասարանի համար նատուրալիստական աշխատանքի կազմակերպումը բնության մեջ և կենդանի անկյունում (բովանդակությունը և անցկացման մեթոդիկան) (1 ժամ) :

9. Առաջին դասարանի աշակերտության գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպումը (բովանդակությունը և սրանց անցկացման մեթոդիկան) (2 ժամ) :

10. Կրկնություն և տարեկան հաշվառում 1-ին դասարանում (1 ժամ) :

## II. ԴԱՍԱՐԱՆ (12 ժամ)

1. Առաջին դաս՝ «Բանջարանոցն աշնանը» թեման :

2. Եքսկուրսիա բանջարանոցում :

3. Եքսկուրսիայի տպալիորությունների ամբացումը (կուեկցիաների պատրաստում, նկարահանում, գրանցում) :

4. Դաս՝ «Կատուն—ընտանի կենդանի յե» թեմայով (դասի մեթոդիկան, աղյուսակների ցուցադրումով) :

5. Դաս՝ «Կատվի վայրի ազգակիցները» թեմայով (դասի մեթոդիկան, աղյուսակների ցուցադրումով) :

6. Առաջին դասը՝ «Լճակ և գետ» թեմայով :

7. Դաս՝ «Զրամբարներում ապրող կենդանիները» թեմայով (կենդանի ձռւկը, գորաք, խխունջը, ջրային միջատները) :

8. Դաս՝ «Զբամբարներում աճող բույսերը» թեմայով (դասի մեթոդիկան՝ ջրային կենդանի բույսերի ցուցադրումով):

9. Դաս՝ Զբամբարներում բնակվողների կյանքի դիտողության կազմակերպումը կենդանի անկյանում:

10. Տանը կատարելու առաջադրանքներ, գրանցումներ և նկարելու աշխատանքն ըստ 2-րդ դասարանի ծրադրի (դեկավարելու մեթոդը և ստուդումը):

11. Գյուղատնտեսական աշխատանքների կատարման դասեր, ըստ 2-րդ դասարանի ծրադրի (բովանդակությունը և սրանց անցկացման մեթոդիկան):

12. Տարվա ընթացքում անցածի կրկնություն և հաշվառման դաս, ըստ 2-րդ դասարանի ծրադրի:

### III. ԴԱՍԱՐԱՆ (14 ժամ)

1. Առաջին դաս՝ «Հողը և ոգտակար հանածոները» թեմայով:

2. Եքսկուրսիա հողի շերտերը դիտելու նպատակով:

3. Եքսկուրսիայից բերված նյութերի լաբորատոր ուսումնակրությունը:

4. Կինո-դաս. «Ոգտակար հանածոները և սրանց նշանակությունը տնտեսության մեջ»: Դասի մեթոդիկան՝ սոցչինարարության նյութերի ընդգրկումով:

5. Մետաղների հատկությունների լաբորատոր ուսումնասիրությունը:

6. Դեմոնստրատիվ դաս «Զբի շրջանառությունը բնության մեջ»:

7. Զբի հեղուկ վիճակի հատկությունների լաբորատոր ուսումնասիրությունը:

8. Դեմոնստրատիվ դաս՝ «Շողեմեքենա»:

9. Դեմոնստրատիվ դաս՝ «Զերմաշափի կազմությունը»:

10. Դեմոնստրատիվ դաս՝ «Շողի հատկությունները»:

11. Դեմոնստրատիվ դաս՝ «Ելեկտրական յերեկությունը բնության մեջ»: Դասի մեթոդիկան հակակրօնական դաստիարակության մոմենտներով:

12. Նկար, գրանցում և տանը կատարելու առաջադրանքներ 3-րդ դասարանի դասերին:

Արանց ղեկավարման մեթոդիկան և ստուգումը :

13. Նատուրալիստական աշխատանքներ 3-րդ դասարանի աշակերտության համար :

14. Տարեկան կրկնությունների և հաշվառման դասեր 3-րդ դասարանում :

Աշակերտության գիտելիքների գնահատման չափանիշները :

#### IV. ԴԱՍԱՐԱՆ (9 ժամ)

1. Առաջին դաս՝ «Կենդանիների կյանքը» թեմայով :

2. Անվողնաշար կենդանիների ընդհանուրը հատկանիշների ուսումնասիրության դաս. (դիտումներ կենդանի որյեկտների և բնության մեջ հարաբերական նպատակահարմարության յերեվույթների բացատրության մեթոդիկան) :

3. Վողնաշարավոր կենդանիների ընդհանուր հատկանիշների ուսումնասիրությունը :

4. Կինո-դաս՝ «Տաք և ցուրտ յերկրների կենդանիները» :

5. Մարդու և կենդանիների ներքին որդանների դասավորության մեջ յեղած նմանությունների ուսումնասիրությունը (հերձում): Մարդու կենդանական ծագման հարցի բացատրության մեթոդիկան :

6. Ներվերի հատկությունների ուսումնասիրությունը (բնական սրբեալբաստի ցուցադրում): Մարդու և կենդանիների բարձր ներվային գործունեյության վերաբերող հարցերի հակակրոնական բացատրության մեթոդիկան :

7. Նկարներ, դրանցումներ, տանը կատարելիք աշխատանքների առաջարանքներ 4-րդ դասարանում: Արանց ղեկավարությունը և ստուգումը :

8. Կրկնության դասեր և քննություններին նախազարտարարութելը 4-րդ դասարանում:

9. Քննությունների կատարման մեթոդիկան 4-րդ դասարանում: Աշակերտության գիտելիքների գնահատման չափանիշները:

# Ց Ա Ն Կ

	Եջ
1. Կենդանաբանություն	5
2. Բուսաբանություն	15
3. Եվրուցիոն ուսմունք	30
4. Մարդու անատոմիա և Փիզիոլոգիա . . . . .	42
5. Բնագիտության մեթոդիկա . . . . .	53



Տեխ. խմբ.՝ ի. Վարդանյան  
Սբագրիչներ՝ Հ. Դոլուխանյան և Հ. Մանուկյան

Տրված և արտադրության 26 մայիսի, 1937 թ.  
Ստորագրված և տպելու 27 հունիսի, 1937 թ.  
Գլավիտի լիազոր Պ—4148, Պտավեր 775, Հրատկ. 4110  
Տիրաժ 2000

---

Պետհրատի տպագրան, Երևան, Լենինի 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0004469

ԳԻՒԸ 1 Ռ. 50 Կ.

A-  
23093

194.

Программы  
Педагогических школ. часть III-я  
Гиз Арм. ССР. Ереван. 1937 год.